

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

## ԿՍՏԱՂԻ ՍԵՐՈՒՆԴԸ

Մէկիկ մէկիկ, իրարու ետեւէ, զիրար կանխելով, կը դուրսնայ, կ'իջնան երկուան կուռքերն իրենց խախուտ պատուանդաններէն: Ու դանուածած որ զգուանքով հանդիսատես կ'ըլլանք այդ յաջորդական գահավէժ անկումներուն:

Դանուածած որովհետեւ անկարելի է շարունակել վերջնական փլուզումին առջեւ անցեալ փայփայուած պատրանքներուն, անցեալ վեհանձն ակնկալութիւններուն և ուղղամիտ ու անձնուէր վատահումներուն:

Զգուանքով՝ որովհետեւ իրենց անկումին — իրենց հոգիներուն ընդերկար պարտկուած նեխութիւնը դուրս տալու, իրենց դիտակից ու կամաւոր անարգութիւնը ապացուցանելու այդ յեղակարծ ու դիւահար մղումին — մէջ՝ այնպիսի շեղական յամառութիւն մը, այնպիսի ատաւոր թախանձանք մը կը գնեն կոր, որ ա՛յլ կը զագրի, կը լսէ ամէն ասորակոյս, ամէն վերապահում, ամէն մեղմացուցիչ մեկնութիւն ու է՛ն լծացած ու է՛ն անմղողով խղճմտանքներն անգամ նողկանքով կը խառնուին:

Բայց հոս չի վերջանար ամէն բան:

Պէ՛տք է առել զիտանաք զիրենք, նո՛յնիսկ իրենց խաղցութեան ու խորտակումին մէջ: Ատե՛լ, անգթօրէն, վայրագօրէն, անվհատօրէն:

Ատե՛լ՝ որովհետեւ է՛ն նենգաւոր, է՛ն քստմեկի, է՛ն ոճրագործ եղանակներովը խաբեցին, ստեցին, պղծեցին անոնք: Ատե՛լ՝ որովհետեւ անոնք նուիրական բառերով լուրջեցին ժողովուրդը, անոր հաւատքը շահագործեցին ու անոր քթին խեղացին: Ատե՛լ՝ որովհետեւ իտէպիւն մատնիչներն եղան անոնք եւ որովհետեւ չենք կրնար չատել զիրենք, բարոյական դժնդակ յուսախաբութիւններուն համար, զորս տուին մեզի և որոնք է՛ն անմոռանալիներն ու է՛ն աններելիներն ճն ըստ յուսախաբութիւններուն:

Փաղափարի մը համար մաքառող, գաղափարի մը համար տառապող ժողովուրդ մը շատ բան կրնայ մոռ

նալ, շատ բան կրնայ ներել, բայց չի կրնար մոռնալ, չի կրնար ներել որ իր շահերուն ծառայել, իր անուանով երգուրննալ կեղծօղներ համարձակին իր է՛ն խորունկ ու է՛ն հզօր զգացումները պատրել, իր հոգիին հետ խաղալ...:



Ի՞նչ կրնար ըլլալ սերունդը, զոր այդ մարդիկը պատրաստեցին: Ի՞նչու անողօք ըլլալ, ի՞նչու մեղադրել, ի՞նչու մտրակել այսօրուան հայ երիտասարդութիւնը, հանրային տարրական պարտականութիւններու հանդէպ իր ցոյց տուած հեղգութեան, ետականութեան ու դատաւարութեան համար, քանի որ անոր այդ ողբալի, այդ ահաւոր ուրացումը բնական, արամբանական, ճակատագրական հետեանքն էր իր անմիջական առաջնորդներուն գարշելի ազդեցութեան:

Ահա՛՛ վերջովի մտածումը որ մեզ կը յաճախէ, ամէն անգամ որ հայ երիտասարդութեան բարոյական արգել վիճակին յուշածումը կոկիծ ու զայրոյթ կ'արթնցնէ մեր ներսիդին: Բայց այդ սրտցաւ հաստատումը բնա՛ւ չի մզեր մեզի արգարացնելու հայ երիտասարդութիւնը, բնա՛ւ չի փորձեր մեզի անգիտակից ու անպատասխանատու զոհեր ածանելու անոր թոյլ ու շփոթ կարգերուն մէջ:

Ահ, չէ՛ անշուշտ, կորովի վարպետները, հաւատքի առաքելները, անձնուրացութեան աստուածները չը պահեցան մեր նորագոյն սերունդին: Ըստհակառակը, այդ կողմէն տարապայմանօրէն բաղդաւոր եղաւ ան:

Հայ Յեղափոխութիւնը անզուգական տիպարներ կանգնեց անոր դէմ, զիւցազնական, պաշտելի դէմքեր կայծակեց, որոնք մեր ու մարդկային ցեղին պատե՛րը կ'աւելցնեն և որոնք՝ արիւնի խորքի մը վրայ անմահօրէն դրոշմուած՝ մեր սրտերուն մէջ պիտի տաճարակալեն յաւիտենապէս:

Բայց նորահաս սերունդները թիչ անգամ, ասո՛ւղ, իրենց աչքերը կը գարձեն Գործողութեան հերոսներուն, թիչ անգամ կը հասկնան, կը կարգան, կը սերտեն՝ դրոշմներէն, զիրքերէն ու թուղթերէն դուրս ու հետեւ կեանքին գողգոթաններուն վրայէն, կառափնասանհեղձ բարձունքէն ու զնգաններուն խորերէն շաղկուած ելլե

քական ու արգաւանդ դասերը։ Ու խօսքին ճարտար ու արհեստ դպիրներն են որ աւելի յաճախ կը վայելեն երիտասարդութեան անհանդարտ ու հիացական ուշադրութիւնը, անոնց է որ մտիկ կ'ընէ, անոնց պօշ ու հնչական Ֆուզնեբոյն է որ շատ անգամ ան կը գինոգայ, անոնց է որ կը հեակի, թեթեալ ու դիրտին քայլերով։ Եւ երբ անոնք վհատութեան, «խոհեմութեան», սկեպտիցիստութեան ու հեզոտ ու վայելատէր անտարբերութեան խօսքը կ'ընեն իրեն, զարմանալի չէ՛ որ երիտասարդութիւնը կանաչ դարձնէ իր ընդզուովի ու զոհողութեան ճակատագրին, զարմանալի չէ՛ որ կծկտի, տափակնայ, ուրանայ ու մատնէ ան...։

Մեր վերջնագոյն սերունդի տղաքները, թիւրքիոյ մէջ ու Պոլսոյ մասնաւորապէս, այս աղէտաւոր ազդեցութիւնը կրօնքին շարաշար։ Ուշ հասած ու շատ գէշ առաջնորդութեամբ՝ անոնք չի կրցան փնտռել ու գտնել իրենց հոգեկան սնունդը առաջին անապական ու կենարար աղբիւրներուն մէջ։ Իտէալի ու հաւատքի ներշնչութեանը չեղան իրենց անմիջական դաստիարակները։ Հայ Զարթոնքումին առաջին շրջանը անցեր էր, ու անոնք չէին ճանչցեր, չէին կրեր Ալիշաններու, Արովեաններու, Նալբանդեաններու, Քաթիպաններու, Պէշիբաշիաններու, Արծրունիներու Բաֆֆիներու հզօր ու բարերար ճիգը։

Իտէալից մի բուն ու վերածնիչ հոսանքը, որ Եւրոպայէն զարձոյ խուժը մը խանդավառ մտաւորականներու հետ խուժեր էր թրքահայ ստրկական մթնոլորտին մէջ, շատոնց արդէն կտրեր, անհետացեր էր։ Սակայն մանագրութեան գործաւորները ապրեր էին։ Բայց անոնք չէին կրցած ունենալ իրենց արժանաւոր յաջողութիւնը։ Հանրալին կեանքը, հանրային գործունէութիւնը Պարսիստանի, Հիւսեփանոցի, թաղական խորհուրդներու և մրցանակաբաշխութեան հանդէսներու շուրջը կը խտանար, կը սահմանափակուէր հետզհետէ։ Դատարկ ու մակերեութային գրականութիւն մը, զուրկ ամէն ազնիւ ձգտումէ, թեթեալ ու վայելուչ Ֆանթազիաներու միայն հասնող ու տիլէթանթական շնչատ ճիգերու մէջ ուստոյ։ Աննպատակ ու աննկարագիր լրագրութիւն մը, որուն է՛ն համբաւաւոր ու է՛ն աղմկայոյզ պայքարութիւնը ուրիշ բան չեղան, եթէ ոչ անձնական խօսք ու թաքուն կերքերու, պզտիկ ատելութիւններու, ճգճիմ նկատումներու առաւել կամ նուազ քողարկութեամբ, առաւել կամ նուազ օրամիտ սպասարկումները, որուն է՛ն յանդուգն նորութիւնները ուրիշ բան չեղան, եթէ ոչ վաղնջական, պատկառելի հասարակ-տեղիքներ, որ զուարճացուց, զայրացուց, շարժեց ու զրգոնց, բայց երբէ՛ք չի կրցաւ կրթել, թելադրել, առաջնորդել, որ քանդեց թերեւ, բայց ապահովաբար չի կրցաւ շինել։— Միակ լուրջ ու գեղեցիկ գործը, որ եղաւ այլ շրջանին՝ Կեդրոնականի հաստատութիւնն էր, որ՝ հակառակ իր վարիչներուն անբաւականութեանը՝ շատ բան տուաւ ազգին ու Հայ Յեղափոխութեան։

Կարելի չէ՛ ըսել որ Հայ երիտասարդութեան այն ստուար մասը, որ յեղափոխական Մկրտումներէն շնչացաւ, հաւատարիմ շնաց իր երէկուան վարպետներուն։ Թեթեալութեան, զէվզէկութեան, եսականութեան մէջ զաննք գերագանցեց, և եթէ անարդութեան մէջ— գործնականապէս— տակաւին չէ հաւատարած անոնց՝ մրցումի եռանդին պակասէն չէ անշուշտ ատիկա, այլ տարիքի ու պարագայի խնդիր մը լսկ։



Ինչ պիտի ըլլայ սերունդը, որ այս պահուստ, մեր վերաւոր Հայրենիքին մէջ՝ Բոնութեան շէլ ու արհեստ նայուածքներուն տակ, յամբարէն կը պատրաստուի։

Պիտի ըլլայ՝ ան առողջ ու հարազատ սերունդը, որ պիտի օրէք մեր ճամբաները՝ իր նախորդներուն կուտակած բովանդակ աղտեղութենէն։


Պիտի ըլլայ՝ ան հզօր ու ամբհի սերունդը, որ պիտի կազդուրէր մեզի՝ իր երէցներուն սուրբութիւնը զգուխառն, այլ եղբայրական զանութենէն։

Պիտի ըլլայ՝ ան առողջ ու վրիժառու սերունդը, որ պիտի մոռցնէր մեզի ներկային բոլոր նենգութիւնները, բոլոր վատութիւններն ու մատնութիւնները։

Պիտի ըլլայ՝ ան կտրիճ ու տիրական սերունդը, որ պիտի մխիթարէր մեզի մեր բոլոր պատրանքներուն, մեր բոլոր հիասթափումներուն, մեր բոլոր քանդուած երազներուն կսկիծէն։

Պիտի ըլլայ՝ ան կատաղի Սերունդը, որուն կրօն պատենք, ջերմեասնդ, անձկագին, հոգեկարկառ սպասումով մը...։

ՀԱՅԻՆ ՈՒԺԸ



Տարի մը անցեր էր արդէն Աւերումի փոթորիկէն ի վեր, որ շղթայազերծուցաւ Հայ Աշխարհին եղիկի տարածութեանը վրայ ու քարոզանդ գետնի հաւատարմութեամբ իր ստանալ ու վեհեբոտ հրդեհները ամբողջ ողբալի բնակչութիւններու։

Մտրկական արիւնի յորդառատ օսահանքները չէին կրցեր բեղմնաւորել հայրենի հողը, որ դեռ պիտի կը հոտէր։ Ահաւոր խողխողումէն վերջ, վայրի ծագիկները՝ հապճեպով, զբեթէ ինքնիւրեք թաղուած ամբոխներու փտութեան մէջէն՝ անագորոյն հեզութեան բերաւոր ժպիտներ բացեր էին, այդ գարնան։ Բայց ցորենը չէր

կանչեր ու գութանին նուիրական լիւումէն այրիացած արտերը, լերկ ու խոպան, իրենց լքուած ու անարգաւանդ մայրութիւնները կը սպային:

Ու ամառուան առաջին տօթերուն հետ, Սովը — անողորմ պատուհաս հողէն ապրող համայնքներու — իր մահացու շունչը կը փչէր հիմա, լափել, հատցնել սպառնալով կիսամեծ կեանքը Արիւնէն ճողոպրածներուն:



Հագիւ ժամու մը շափ հեռու Մեծ Ճամբէն, ուր կէց բռնաւոր կարաւաններ, սպառազէն ձիաւորներ ու շղթայակապ աքօորեալներ կ'անցնէին շարունակ եւ որուն ծայրը չէին զիտեր ո՛ր կը յանգէր, սեպ դարձերի մը կուշտին միտուած, դիզուած էր Օ\*\* գիւղը: Միտ մինակ, ամալի ու զածան բնապատկերի մը կեդրոնը կղզիացած էր ան, ու իր տանիքները՝ ճերութեան ու յոգնութեան անհուն լքումով մը, իրարու վրայ ինկած, իրարու կաթնած, իրարու նեցուկ ըլլալ ուզող ցաւագին ուսերու պէս քովէ քով կը շարուէին, ու վախկոտ ու ազօրմուկ երևոյթով մը, ներողութիւն կը խնդրէին կարծես, այդ բարձունքէն, իրենց բնակիչներուն ապրիլ յանգզնելու սփրին համար:

Այդ երդիքները կանգուն մնացեր էին նորէն: Բթանութիւնը՝ ուշ մնացած ու ա՛լ յափրացած, ձանձրացած՝ ժամանակ ու տնօրեակ չէր ունեցեր ամբողջական քանդումի գինով վայելքին յամենալու հոտ: Արիւնով ու աւարով շատացեր էր: Գիւղին այրերէն մաս մը մորթեր էր շտապով ու գիւղացիներուն բոլոր տաւարն ու պաշարը առեր տարեր էր:

Կուշտուկուտ Եղեռնին ու ծանրաբեան թալանին մեկնումէն վերջ, սուգի եւ անձկութեան գիշերներու երկարատեւ զարհուրանքէն ջախջախուած, սպառած՝ երբ այրիներն ու որբերը դադրեր էին պահ մը կոծելէ, հեծկտալէ, երբ արցունքը ցամքեր, լսեր էր աչքերուն մէջ ու աղիքներն սկսեր էին պոռալ սովալլուկ որովայններուն խորէն՝ այն ատեն է որ ծայր տուեր ու բռնաւոր ու անողոք օւժգնութեամբ մը ընդհանրացեր էր յուսահատ շուարումը, սանձակոտոր, գերագոյն խուճապը:

Պնտի էին... բայց ո՛ր էր հացը...:

Նայուածքները, մթին զահանգանքով մը, փայլատակեր էին, ձեռուները, ջղաձգական երկարութիւնով, պրկուեր էին պարապին մէջ:

— Հաց... հաց... հաց, կը ճըւային պզտիկները:

Ու մայրերը՝ իրենց զաւկներուն աղաղակներէն խելակորոյ՝ զոններէն շուրջ նետուեր, սար ու ձոր ինկեր էին, քաղելու, ժողվելու համար ինչ որ մարդկօրէն — անասնօրէն իսկ — կարելի էր ուտել, ծամել...:



Անկից ի վեր, տարի մըն է կ'ապրէին: Ինչպէս Իրենց ալ չէին զիտեր:

Երբեք, հեռուններէն, այսպնական օգնութիւններ հասեր էին, երկարելու համար կարծես այս տեսակ մը անվերջ հոգեվարքը: Ժամուն դուռը հաց բաժնիք էին իրենց, ու Տէրտէրը, ջերմասնոյ մաղթանքներով, պատուիրեր էր իրենց աղօթք ընել թանկագին կենացը այն հայ բարերարներուն, որոնք՝ հեռաւոր երկիրներու առատութեան ու պերճանքին մէջէն՝ իրենց մտածեր, իրենց սղորմեր ու իրենց համար հաց զրկեր էին:

Ու անօթութենէ չբացուել յամառող կղզիներէ՝ անէծքի պէս խուլ ու խոպոտ օրհնութիւններ զուրօ կերէին...:

Յետոյ, կրօնքին մարդիկը հասեր էին հեւի հեւ, հոգիի դիակներ որոնող ագաւաններու պէս: Օ՛ գծնէ տողանցութիւնը բողոքական ու կաթոլիկ մարդօրու թեան այդ վայրագ միջնորդներուն: Առոնք ալ հացի պատահներ նետեր էին գիւղացիներուն առջին, խոտանալով անոնց՝ Արքայութեան յաւիտենական կերուխումի սեղանին հետ ու անկից առաջ՝ երկրի ամէն օրուան հացին ապահովութիւնը... եթէ ուզէին մտնել Տէրտէր ճամբան: Սովատանջ հայ գեղջուկները՝ զուրած ու գայթակղած այս ամպարիշտ ու շնական սակարկութեանէ՝ մերժեր էին ուրացումին պիղծ հացը:

Բայց հետզհետէ օգնութիւնները կը պակսէին:

Հեռուն, անորոշ հորիզոններէն ու անձանօթ սահմաններէն անգին գուշակուած, երազուած, օրհնուած բարերար սրտերը կը կարծրանային, կը գոցուէին, յարատեւ աշխատաւոր մարտողութիւններուն այլամերժ փանումովը: Քրիստոնէական Գթութիւնը, քմահաճ ու յեղիեղուկ պոռնիկ, յագեցած, յոգնած էր այլ ևս Հայ Տառապանքէն, և օւրիշ կողմ կը դարձներ իր շարունակ ու ձեռնացած ժպիտները, ուրիշ տեղ կը պտտցնէր իր յայրատ ու թոմթոկած միսերը:

Ու մտոցուած, կորսուած հայ գիւղին մէջ, կսկիծով կշտացող խեղճ մայրերը, խելայեղ անկարողութեամբ ու յուսահատ արհաւիրքով, կը դիտէին իրենց զաւկներուն ամէն օր աւելի դեղնիլ, ամէն օր աւելի նիհարնալ, ամէն օր աւելի մահանանալը...:

Կամաց կամաց շրջակայ լեռներն ու դաշտերն ալ մերկացեր էին ամէն կանանչէ: Ամէն բուսականութիւն խանձեր, շորցեր էր: Իզո՛ւր՝ սար ու ձոր ինկած՝ վայրի խոտեր ու արմատներ կը փնտռէին: Իզո՛ւր՝ աճոյն ու ցաւագին էակներ՝ հողին ծոած, հողին կառչած, հողին ապաւինած, հողին վրայ քաշկռուտով՝ անկից կը յուսային, անկից կը սպասէին, անկից կը խնդրէին իրենց սնունդը: Բնութիւնը՝ ամուլ ու խորթ մայր՝ ինք ալ երես կը դարձներ անոնց: Հօգն էր հիմա, որ կը կանչէր, կը քաշէր, կ'ուզէր զիրենց, ու փոխանակ իրենց կեանք տալու՝ աչք անկեր էր ան իրենց կտոր մը տնկեն:

զան կենցեցին, կու տալ կը ցանկար զայն, կարծես յագեցած չըլլար զեռ ու պէտք ունենար մարդկային դիակներու. արգասաւորելու համար իր ցամբած կողերը:

Քիւղին ողջ մնացած էրիկ-մարդիկը, ատեն մը, անկարող ու զլխիկոր, իրենց կիներուն ու զաւելններուն շուրջը երեքսկացնոր էին, իրենց ալ անոնց պէտ, անոնց չափ տառապելով, բայց անխօսուկ, գրեթէ ամօթահար՝ անոնց օգնութեան հասնիլ չկրնալուն: Անոնց ձայնը լսել, անոնց նայուածքին հանդիպել, անոնց ձեռքէն բանելը այրող, լլկիչ ցաւ մը, կրճող, կօկծիչ խղճիխայթ մը դարձեր էր իրենց: Բայց ինչ ընել: Վարուցանը անկարելի էր: Քիւրտերը տարեր էին իրենց եզներն ու արօթները: Ու եղկելիները՝ դժնդակ, այլ զօւցէ արդար ճակատագրականութեան մը զայրոյթին տակ կորացածակ, անօգուտ ու դատաւարտուած գոյութիւններու անոռհաման պարտութիւնովը կը յաճէին հիմա, իրենց երկու քովերն ի վար կախ պաշտօնելով վատ ու օտրկական թեւեր, որոնք՝ ինքնապաշտպանութեան առնական կոխին համար զինուելու անընդունակ՝ զրկուծք էին աշխատութեան ու հացի կոխին զենքէն: Ու անոնց կը զգային տարտամօրէն — ու ասիկա ամէն օր քիչ մը աւելի կը հեռացնէր զիրենց զիւղէն — թէ իրենց կիներն ու զաւելնները չէին ներեր իրենց՝ հօր ու էրկան պէտ մեռնիլ դիտցած չըլլային: Վերջապէս՝ ճարահատ՝ իրարու ետեւէ ձգեցին, դացին գիւղէն, ուրիշ տեղ մը աշխատանք ու հաց գտնելու յոյսով՝ իրենց ու իրենցներուն համար:

Կացութիւնը անհնարին դարձեր էր զիւղին մէջ: Ատենէ մը ի վեր, ամէն օր, անօթութենէ մեռնողներ կը թաղէր Տէրտէրը...:



Դարկահար, հերարձակ, իրենց վտիտ մարմիններուն ողբալի մերկութիւնը հազիւ ծածկած պատառատուն զրզկեակներով, ու մթամած, գրեթէ կայր նայուածքներն վայրահակ՝ խուժք մը կիներ, ամառուան հրակէզ արկին տակ, կ'երթային զանդաշելէն, լուսօրէն ու տաժանքով կը քաշկոտուէին Մեծ Ճամբէն, ուրկէց բեռնաւոր կարաւաններ, սպառազէն ձիաւորներ ու շղթայակապ աքօրեալներ կ'անցնէին շարունակ և որուն ծայրը չէին գիտեր ո՞ր կը յանգէր:

Ամէն անգամ որ ոտնաձայն մը կը լուրէր, յանկարծ, ամենքը մէկ կը սթափէին իրենց ծանր քնութեանէն, կը ցնցուէին իրենց զգայասպառ անդամներուն տաժանելի խարխալանքովը ու մեքենաբար կը պատրաստուէին խայտառակ ու անհրաժեշտ կնցուածքին, պիղծ ու ստիպողական ժէթին...:

Երբ հեռուէն անցորդը կը նշմարուէր, սո՞ղոյն ու մահատիպ էակները կը սկսէին ահեղօրէն, խելայեղօրէն ժպտիլ...:

Երբ անցորդը տակաւ իրենց կը մօտենար, կ'մախաձեւ ուրուականները կը շտապէին, տենդոտօրէն տատանելով, իրար կ'անցնէին ու բնագագաբար կը ճըզնէին, կը ճարտարաւորէին պշտանքի քօտմեքի ու աղեխարշ ձեռքէքուտներ, հրապուրանքի լիտի ու կօկծագին շարժումներ ուրուագծել:

Մահու եւ կենաց գերագոյն բուպէն էր: Պէ՛տք էր կեցնել անցորդը, պէ՛տք էր արթնցնել, զրգուիլ անոր անասնական մոլուցքը ու՝ զիւրին ու հրէշային յագեցումին փոխարէն՝ հացի կենարար պատառ մը խլել անկից:

Ու իրենց մարած, խոռոչացած աչուրները չափազանցօրէն կը բացուէին, կը կենդանանային, աստաւոր ու խոստմնառատ նայուածքներով հրավառ:

Հացին շախշախիչ, այլամերձ, անդիմադրելի անկալութիւնն էր, որ այդ սովաբեկ արարածներուն մէջ կը լռեցնէր, կը մեռցնէր ամէն գիտակցութիւն, ամէն խղճահարութիւն, ամէն ամշկոտութիւն:

Երբ անցորդը իրենց մօտ կը հասնէր... օ՛ արհաւիրք... կենդանի դիակները կը պարէին հիմա... խօ՛ւ, դիւային, մեռելական պարը... անցորդը կը կանչէին, անոր ճամբան կը կտրէին, զայն կը պաշարէին, ու կը խնդային, կը ցաւաքէին, կ'երգէին, կ'ոտնային անոր առջեւ, զինով ու անառակ ու խելագար գալարութեամբով...:

Ու այդ ամայի ճամբուն վրայ, այդ կիղիչ ու մօլեգրգիտ արեւուն տակ, անցորդը — յաճախ քիւրտ աւազակ կամ թիւրք զապթիլ — տրամադիր կ'ըլլար միշտ փորձուելու, որքան ալ այսպանական ըլլար փորձութիւնը, որքան ալ եղեռնական ու սոսկալի՝ յագուրդի արարքը:

— Պատառ մը հաց, պատառ մը հաց, կը ճըւային ամենքն ալ, ճղակտոր մատուցութեամբով զէպի անցորդը կարկառելով իրենց ոսկրեղէն իրաններուն ողորմելի աւերակները:

Անցորդը կ'իջնէր ձիէն, իր տոպրակը կը բանար, քանի մը պատառ հաց կը նետէր անոնց առջին, անոնցմէ մէկը կ'ընտրէր ու ճամբէն գուրս կ'եւէր, քիչ մը հեռուն, թուփերու տակ առանձնաճառու համար իր ընտրածին հետ, որ անասնական համակերպութեամբ մը, կը հետեւէր իրեն, շարունակելով մօլեգնօրէն խաճուել իր մսաթափ ձեռուներուն մէջ բռնած հացի պատառը, մինչդեռ, անդին, իր բազդակից քոյրերէն ոմոնք իրաբու բերնէ կը յափշտակէին վերջին փշրանքները և ուրիշներ՝ իրենց բաժինը հոգեկն սեղծելով ցամբած կուրծքերնուն վրայ՝ ճամբէն կը հեռանային եւ զէպի տուն կը վազէին, օգնութեան հասնելու իրենց մահամերձ — գուցէ մեռած — զաւելններուն:

Օ\*՝ գիւղէն էին ամենքն ալ: Այրի մայրեր ու օրր քոյրեր, զորո իրենց ու իրենցներուն անօթութիւնը հոռեղներ, բերեր էր հրմշակելէն:

Ո՞վ ունեցեր էր այդ յուսահատ գաղափարը: Ո՞վ առեր կր առաջին, ահաւոր քայլը: Չէին գիտեր: Բայց ա՛լ իրենց մնացած միակ միջոցն էր ատիկա՝ մահուան գէժ մաքառելու: Ու է՛ն դաժան պարկեշտութիւնները, է՛ն զրահաւոր առաքինութիւններն իսկ կը յաղթուէին, զի նախքան ու անձնատուր կ'ըլլային՝ անօթութեան անողոր խաճատումներուն տակ: Ու հայ բարի գեղջկուհիները՝ անպիմազրելի, անագորոյն հարկէն չարաչար բռնադատուած՝ մէկիկ մէկիկ ձեռք կ'առնէին Աստուծոյ ճամբան:



Սառա, այդ իրիկուն, չէր կրցեր գոցել իր աչուրները: Ծրկու պզտիկները՝ երկար ժամերով լալէ ու վայելէ սպասած՝ անկիւն մը ինկեր, թմբեր էին ու իրարու քով էր ժրագիւն հիմա, Սառա՝ մտմտաւոր իսկ անկարող՝ ներսի հոծ խաւարին մէջ արձանացած կը մնար, ամբողջ էութեամբն ականջ տալով խուլ, անզուհական կաղկանձիւնի մը, որ կը հասնէր անընդհատ գիշերին խորհրէն:

Երկու օրէ ի վեր, հացի փշուր մը անդամ չէր մտեր իրենց գոնէն ներս: Ու Սառան միտ մինակէր այլ ևս, ու իրեն մնացեր, իր մաղաղ ուսերուն բնօրուեր էր երկու պզտիկներուն հոգը:

Հայրը, մշակ թաչօն, Աղէտքին գիշերը, ուշ տեսն, օրն ի բուն դատելէ յոգնուսպատ վերադարձած միջոցին, սպաննուեր էր քիւրտերէն: Քանի մը օր վերջը, գիւղէն քիչ հեռու, փոսի մը եզերքը գտնուեր էր իր զիակը, ահռելիօրէն կրճատուած: Եղկելի թաչօն այնքան ալ զժբազ չէր մեծեր: Մահը յանկարծակիի բերեր էր վիճը, ու ան չէր տեսեր իր օճախին պղծումը, իր ունեցած—չունեցածին կողոպտումը:

Գրեթէ ամիտ մըն էր, որ թաչօի այրին, Կիլիւզարն ալ թաղեր էին: Իր երեք զակընդոր պահելու, անուցանելու համար ինքզինքը կրկնապէս զրկեր, իր բերնին պատառը անոնց բերանը թխեր էր, ու անոնց ու իր տառապանքին չկրնալով տոկալ, խեղճ, անձնուրաց մայրը հալեր, մաշեր, յամառեր էր մինչեւ վերջը, ու օր մըն ալ հիւանդ՝ խորտակուած՝ ինկեր էր երեսի վրայ, ու ա՛լ չէր կրցեր ոտքի ելլել:

Մօրը մահուանէն վերջը, Սառան զգացեր էր իր չորսգին լայնցնող ցուրտ պարապը: Ինքզինքը բռնեք էր չլստորելու համար յուսահատութեան բերանարաց վիթխարի անդունդին մէջ: Արիացեր էր: Տասնութեց տարու էր ինքը, եօթը տարեկան քոյր մը ու աւելի փոքր եղբայր մը ունէր: Պէ՛տք էր որ ապրեցնէր զանոնք, ինչպէս որ ալ ըլլար: Ու երիտասարդ մօր մը պէտ կտրիճ՝ Սառան հրաշքներու կարող եղեր էր, Անկարելիին զարնուեր, անոր երեսները ճանկոթեր, զայն յաղթեր էր ու վերջապէս յաջողեր էր, ամիսէ մը ի վեր,

սովածահ կորնչելէ փրկել իր երկու սիրական ձագուկները:

Բայց քանի օր է, Սառային բազըր դարձեր էր: Ի զուր կը մաքառեր ան օրն ի բուն: Ալ ո՛չ մէկ բան կը յաջողէր, ամէն ճիգ, ամէն միջոց ապարդիւն կը մնար: Ո՛չ ոք իրմով կը շահադրողուէր զեղին մէջ: Ամենուն ցարը կը բաւեր իրեն: Ու ա՛լ ամէն գուռ կը գոցուէր իր առջեւ, ամէն զէժք կը դառնար իրմէն:

Ու Սառան մինակ զգաց ինքզինքը, միտ մինակ ու լքուած, դատապարտուած ամենէն ու ամէն բանէ, միտ մինակ ու անկարող, անպաշտպան Սովին արիւնախանձ երախին առջեւ, որ ամէն վայրկեան քիչ մը աւելի կը բացուէր ահեղօրէն ու կը սպաննար կուլ տալ իր և իր երկու պզտիկներուն անարիւն կեանքը:

Ա՛հ, եթէ Միսօն հանգիպէր... ա՛լ խոժոռ չպիտի նայէր անոր, ժպտէր պիտի անոր երեսին, անուշ խօսքերով անոր պիտի մօտենար ու անոր օգնութիւնը պիտի հայցէր: Բայց ո՛ր էր ան հիմա...:

Միսօն նշանածն էր Սառային, ու քիչ տեսնէն պըսակուելու, տուն տեղ ըլլալու էին, երբ Աղէտքը վրայ հասեր ու ամէն յոյս ու որոշում քանդեր, թաղեր էր: Միսօն այն աղւոր ու հուժկու կարիճներէն էր, որոնք, վտանգին գիշերը, ծակէ ծակ պահոււրտելով, յաջողեր էին իրենց մարթը անվթար ազատել: Միսօ Սառայի տունը կը գտնուէր, երբ Գիւրտերը գիւղը խուճեր ու դանբը ափ առեր էին: Լեղապատտան՝ կանակը դարձուցեր էր նշանածին ու տանիքէն փախեր էր, ակնթարթի մը մէջ: Յաջորդ օրերը, երբ հանգիպեր էր Սառային, ամչցեր էր անոր երեսը նայելու, անոր նայուածքը կրելու: Սառան զգուանքով անցեր էր Միսօն առջեւէն, առանց բառ մը ըսելու, առանց բարեւ մը տալու անոր: Սառան կ'արհամարհէր ու կ'ատէր այլ ևս իր նշանածը: Միսօն ատիկա զգացեր էր, ու այնուհետեւ խոյս տուեր էր Սառային հանգիպելու: Ու իրեն պէտ վատօրէն լճոգոպրած այրերուն ետեւէն՝ ինքն ալ օր մը հեռացեր էր գիւղէն, սրտին մէջ տանելով Սառայի նայուածքին հոն բացած վերքը, որ չէր գոցուեր ու կ'արիւնէր շարունակ:

Սառան յոյս չունէր ոսկայն Միսօն վերագտնելու: Հարցուփորձ ըրեր ու տեղեկացեր էր որ ան ալ գիւղէն մեկնած էր բաւական տեսնէ ի վեր: Սառան կը զգար որ անօգուտ էր զայն հանդուրժելու, անոր հետ հաշտուելու իր տխուր գիշումը: Շատ ուշ էր ատոր համար: Ի յետոյ ի՞նչ պիտի կրնար բերել իրեն Միսօն, իր յուսահատ մաքառումին մէջ, պիտի կրնար նեցուկ մը ըլլալ իրեն ու իրեններուն, զիւղին ահաւոր կացութեանը մէջ: Ատ ալ անօտոյզ ու անհաւանական բան մըն էր: Ու զերագոյն ակնկալութեան անհրաժեշտ ու կենսական պէտք մըն էր լուկ որ մղեր էր Սառան, իր անձկութեան մէջէն: Միսօն մտածելու:

Ոչինչ ուրեմ, ո՛չ մէկ յոյս կը մնար իրեն, ու մինակ,

մինակ էր Սառան իր երկու օրբիկներուն հետ, որոնց համար հաց ճարելու էր օակայն, ամէն գնով...

Մութ խրճիթին մէջ Սառան շէր կրնար փակել իր աչուրները: Երկու պզտիկները կը շարունակէին յարկաբեկ, իրենց տենդոտ ցունին մէջ երբեմն անորոշ բառեր, մեղմ ու խոպտո ճիշեր զառանցելով: Դուրսէն խուլ, անզոհական կաշկանձիւնը կը հասներ շարունակ գիշերին խորերէն:

Սառա կը յիշէր հիմա այն խորհրդաւոր ու վրդովիչ խօսքը, զոր իրեն ըրեր էր իր մէկ դրացուհին, որուն դիմեր էր, այն առտուն, խելք մը, ճարճարակ մը խնդրելու համար:

—Մեծ ճամբան, Սառա', Մեծ ճամբան...վայ մեր գլխուն... ա՛յ ուրիշ ճար չի՛ կայ մեզի...Մեծ ճամբան, Սառա', Մեծ ճամբան, ըսեր էր ան, զողահար ձայնով մը ու տարօրինակ աչքերով:

Սառան նախ շէր հասկցեր, բայց իր յամառ ու օտիպողական պնդումներուն վրայ, խնդճ կնիկը խոստովաներ էր իրեն ահարկու իրականութիւնը:

Սառա, իր անարատ կուսութեան բովանդակ ընդվզումովը, սարուացեր էր ցօտմնելի յայտնութեանն առջեւ:

Ձէ՛, ատիկա շէր կրնար յանձն առնել: Կը նախընտրէր մեռնիլ... բայց պզտիկները... հա՛րկաւ գեռ ուրիշ միջոց մը պիտի գտնէր հաց ճարելու անոնց:

Սառա ակոսները սեղմեր ու չորոզին ինկեր էր: Բայց ամբողջ օրը շարաշար փնտռելէ յուսակաւոր՝ իրիկուան տուն գարձեր էր ձեռնունայն:

Երկու պզտիկները, զայն տեսնելուն պէս, ուրախութեան խելայեղ աղաղակներ արձակելով, ցատքեր, նետուեր էին անոր վրայ, անոր բէշերուն պլլուեր էին:

—Հաց բերի՛ր մեզի, օիրո՛ւն ցուրիկ...տո՛ւր, շուտ տո՛ւր... անօթի՛ ենք...

Սառա կատաղութեամբ խածեր էր իր լեզուն, չպոռթկալու, չոռնալու համար ներօրին ուռցող, իր կուրծքն ու հոգին բզբտող, պատտոտող կօկիծը:

Ի՛նչպէս կրցեր էր դիմանալ պզտիկներուն արցունքին... Ի՛նչպէս կրցեր էր լսել անոնց աղեկաւոր վայնասունը... Ի՛նչեր գտեր էր ըսելու, զանոնք յուսադրելու, ամոքելու համար, մինչեւ որ օւժասպառ ու նուաղուն ինկեր, լոբր էին անոնք...

Սառա կը զգար օակայն հիմա, թէ յաջորդ օրը արհաւիրալի օրն էր, ուր ա՛լ կարելի չի պիտի ըլլար իրեն անոնց երեւիլ, անոնց վրայ նայիլ, անոնց խօսք ուղղել, առանց նախ հաց տալու անոնց:

Վաղորդայնին այս շարաշուք յաճախանքը գիտքը արթուն ու անձկագին պրկուած կը պահէր, թէև ինքն ալ հիւժած, քայքայուած ըլլար խոնջէնքէ ու անօտաղութենէ:

Դուրսը, տակաւ պղտորիլ օկօեր էր աղջամուղջը:

Սառա յանկարծ սկօաւ դողալ վերահաս արշալոյսին մտածումէն, սարսփէն: Յզշիկ մը սաքի ելաւ: Անկիւնը նայեցաւ խնդութեան աչքերով: Պզտիկները դեռ ցունի մէջ էին: Սառա շունչը բռնած, սաքին ծայրերուն վրայ կոխելով, գնաց մեղմիւ գուռը բացաւ, ու գուրս նետեց ինքզինքը:



Դուրսը մահաշունչ լուսութիւն մը կը ծանրանար, կը ճնշէր թմրած գիւղին վրայ: Ա՛լ չէր լսուեր հիմա պծեմ կաղկանձիւնը որ խաւարին խորերէն ուլուլեր էր գիշերն ի բուն: Սովամահ կեանք մըն ալ գուցէ, որ զաղբեր էր տառապելէ ու գերագոյն հանգիստը գտեր:

Սառա, ատեն մը, թափառայած շրջեր էր գիւղին մէջ, առանց չորոզին նայելու, առանց բան մը նշարելու, գարձեր ու գարձեր էր միկնոյն ճամբաներէն, իր անձկութենէն քշուած, տարուած, դէպի անօտոյզն ու անկարելին դիմելու այսուհար հապճեպով մը: Խորտուփորաւ ուղիի մը գարձքին՝ յանկարծ ինքզինքը եկեղեցիին դրան առջեւ գտեր էր: Սառա պահ մը կանգ առեր էր ու անբացատրելի նայուածքով մը երկաթէ խաչը սեւեռեր էր, որ գրան վրայ բազկատարած կը ցցուէր: Սառա, բնազդական շարժումով մը, վեր առեր էր իր աջ ձեռքը, բայց զայն ճակտին հաղիւ տարած՝ ձգեր էր նորէն: Յետոյ, մէկէ՛ն ետ գարձեր էր ու գահավէժ քայլերով օկօեր էր հեռանալ, դէպի բացաստանը, որուն առջեւ կ'իջնար, կը տարածուէր ամբողջ ամայի հովիտը, ուր ատենով կուգար իր նայուածքը հանգչեցնել ցորենի անսահման ու սօկեփայլ անդաստաններու վրայ: Լուսաղէմի այդ աղբակ միջոցին, հովիտը անհուն, գորշորակ շամանդաղներով քողարկեր, պարուրեր էր իր ամօթալի ու զոչօտող մերկութիւնը:

Սառա հոտ կը կենար անշարժ, երբ հօրիգոնը օկսաւ շառագունիլ եւ աղօթարանը զանդաղօրէն ու վեհաշուքօրէն բացուեցաւ: Ու Սառա տեսաւ որ, նորածագ լոյսին հետ, գիւղը կը օթափէր իր խիտաւոր թմրութենէն, ցաւերը կ'արթննային, անձկութիւնները կը վերջիջէին, հոգեվարքները կը հանդային, ու այս բոլորին վրայէն ու մէջէն Անօթութիւնը իր բողբոջի ու օգնութեան, աղերսանքի ու մոլեգնութեան վիթխարի վայնասունը կը փրցներ, կ'ոռնար, կ'երկարաձգէր զարհուրելիօրէն:

Դաները կը բացուէին հետզհետէ ու հերարձակ, խելացնոր կիներ գուրս կը խուժէին, իրենց լալազին զաւկըներուն աղաղակներէն հետապնդուած:

Ու անոնք կը փախչէին, կը հեռանային, հովիտին կողմը կը շտապէին, և իրարու ետեւէ, իրար հպանցներով, առանց իրարու հետ բարև մը, բառ մը փոխանակելու, գարվար կ'իջնէին, ցաւագինօրէն ուխտաւորօւնելով դէպի յուսահատ ու անիծապարտ Պատարագը:

մօր, որբեարիի ու հայուհիի իրենց պատիւին:

Սառա, հետուէն, սկօաւ անդիտակցօրէն, անխուսափելիօրէն հետեիլ Սովի ողորմ թափօրին:

\* \* \*

Մեծ Ճամբուն վրայ, ուր առաջին անգամ ըլլալով ոտք գրեւ էր, Սառա կ'երթար հիմա վարանոտ ու երբուն ճալերով:

Արեւ շատոնց բաժնուեր, հեռացեր էր հորիզոնէն ու Սառա՝ հազիւ ծածկուած հին հագուտի մը ծուկններովը՝ անողօք ճառագայթներուն այրուցքը կը զգար իր մորթին վրայ:

Երկարատեւ զրկանքներէն, անձկագին հօկուժներէն ու ամենօրեայ տաժանելի խոնջէնքներէն նիհարցեւ, աւրուեր էր իր առոյգ ու հասուն կոյսի շքեղ մարմինը. իր լանջին հպարտ ու հզօր ալիքը ցամքեր էր, իր հարուստ ու հոյակապ բարձքերը հալեր, տափակցեր էին ու իր հաստակերտ, այլ վայելուչ հասակը քիչ մը կըքեր էր: Իր դէմքը օակայն՝ տօգոյն ու ծիրած՝ պահեր էր իր ամբողջ հրապօրը, կարծեաւ անելի աղօտացեր էր, տարօրինակ ու աղեխարշ գեղեցկութեամբ մը. իր երբեմնի նոնակարմիր շրթունքները՝ ծաւն երկարօրէն, տարփոտօրէն համբուրուած՝ գունաթափեր էին ու դանն ծալքն առեր կանխահաս ապրուած տառապանքին, իր այտերը՝ հատած ու դալկատիպ՝ ազնուական ու ախտաւոր շնորհք մը հագեր էին ու իր սեխորունկ աչուրները՝ մթազնած ու կապուտածիւր՝ վեր-դովիչ ու եղեքական ցոլցով մը կը տենալուէին:

Սառա մինչեւ հոտ շարունակեր էր հետեիլ իր գեղացի կիներուն: Բայց Մեծ Ճամբուն վրայ, իր քայլերը ակամայ դանդաղեր էին: Աչուրները՝ լոյսի շլացուցիչ ողորումին տակ՝ սկսեւր էին մթննալ, ու պահ մը վերջը ա՛լ բուրբոնովին կորսնցուցեր էր միւսներուն հետքը:

Անհնարին նուազում մը կ'ընկճեր հիմա իր մէջ աւէն կորով, հողին կը սախէր խոնարհել զինքը ու Սառա գերմարդկային ծիգեր կ'ընէր, կանգուն մեալու համար իր հէզ, կթոտ որունքներուն վրայ:

Յանկարծ առնական բիրտ ձայն մը լսեց: Սառա անդիտակից մղումով մը ցնցուեցաւ: Ո՛ր էր, ի՞նչ կ'ընէր, ի՞նչ բան ունէր հոտ, ո՛ր կ'երթար, ի՞նչ կը փնտռեր: Ոչի՛նչ կրցաւ ճշդել, ոչի՛նչ կրցաւ ըմբոնել, կարծեաւ նուաճուած, շղթայուած ըլլաւ ախտագին քննութեան մը կամ մղձաւանմային երագի մը մէջ, օւրկից չկրնար սթափիլ, հակառակ իր բոլոր շփոթ, այլ նկրտող կամքին:

Չայնը կրկին զարկաւ Սառայի ականջին, այս անգամ անելի ուժգին, անելի որոշ:

—Ո՛ր բարով, կեանքուրի աղջիկ...

Սառա կանգ առաւ դանդաղօրէն: Աչքերը կուրօրէն

սեւեռեց ու հազիւ կրցաւ նշմարել, քանի մը քայլ հետուն, իր դէմք ցցուող անձանօթ ու դաժան երևոյթը:

Սպառազէն քիւրտ ձիւար մըն էր:

Սառա շարժեցաւ, թեւերը պարապին մէջ երկնցուց, ու եւէ բանի մը կոթնելու անօհման, անդիտագրելի պէտքովը: Ա՛լ ճար չէր մեացեր վրան յառաջ երթալու կամ ետ դառնալու: Սպառա՞, ընկճուած՝ պիտի իյնար, տախտապարէր հոտ, ա՛լ անկարող յամառելու:

Աչքերը գոցեց ու զգաց տարտամօրէն, որ իր ոտքերը հողէն կը կտրէին ու իր ամբողջ մարմնովը՝ վերցուած կը տարուէր: Սառա ինքզինքը ձգեց, իր բոլոր էութեան գերագոյն լքումովը:

Քիւրտն էր, որ անոր մօտեցեր, անոր մէջքէն բաներ, զայն — թեթեւ ու զիւրաբեկ վարդենի՝ որ փուշ իսկ չունէր զինքը պաշտպանելու — անութին տակ առեր էր, ու միւս ձեռքով ձիւն ունձէն բանած՝ կը շեղեր հիմա Մեծ Ճամբէն:

Մացառուա թուփերու տակ, ահա՛ յուշիկ մը վար դրաւ ան իր ցաւագին բեռը, քիչ մը հետուն գնաց, իր ձին քարի մը կապեց, անոր վրայէն տօպրակը վերցուց, ու Սառային քով դարձաւ, նստեցաւ:

Քիւրտը բացաւ տօպրակը, հացի խոշոր շերտեր հանեց դուրս ու Սառային երկնցուց, անոր ձեռքը դրաւ, խօթեց զանոնք:

—Ա՛, կե՛ր, կեանքուրի օիրո՛ւն աղջիկ...

Սառա, որ կէտ նուազուն ու գրեթէ զգայազօրի վիճակի մը մէջ անշարժացեր, փռուեր էր, մէկէն թօթուրտաց: Աչուրները բացուեցան, անուրնքները սարսափեցին ու հացին հպումէն, հացին հոտէն, հացին տեսքէն խելաբրած, խելայեղած՝ յափշտակեց, ճիրանեց զայն, պիւրկ ու վարազ մատներով ու օրհասական բուռն ճիգով մը կզակը բացած՝ սկօաւ մղեքնաբար խածնել:

Քիւրտը՝ այդ ահաւոր տեսարանէն զուարճացած՝ գիւսային հեզնութեան ժանտ ծամածռումով մը, կը խընդար ու կը կրկնէր շարունակ:

—Կե՛ր, կե՛ր, կեանքուրի օիրո՛ւն աղջիկ, կե՛ր...

Հալա՛լ հաց է... հայօ՛ւ ցանած, հայօ՛ւ հնձած ցորենի հաց է, կե՛ր...

Սառա մտիկ չէր ըներ, չէր իսկ լսեր: Կողին վրայ երկնցած, օուլալուկ անառունի շղաճքական գալարումներով ու խուլ, խապոտ հեւքերով, կը շարունակէր անխաճնել, հացի պատառին կառչած, կարծես կոկորդիկ կորզի կռուելով անոր հետ:

Բայց Քիւրտը ա՛լ պարբեր էր խնդալէ: Բն պահ մը վերջը՝ իր ծառացող մուրցքը յագեցնելու անհամբեր՝ Սառային քով նետուեցաւ ան, իր բիրտ ու հումկութեան մէջ առաւ զայն, սեղմեց, յետոյ կանակի վրայ տարածեց ու յայրատ ու անողօք մագիլներով սկօաւ անասնաբար զգուել, ճաթիկել այդ աղջնակի եղկելի մարմինը, ու անձնատուր եղաւ անոր եղեռնական, հրեշտային պղծումին...

Ու գմնդակ, զարհուրելի, եղբրական ու շարաշուք բան մը եղաւ ասիկա:

Սառա չընդդիմացաւ առջի բերան: Գլուխը դարձուց ու հացի պատառը ակօսանքուն մէջ սեղմած՝ ա՛լ անկից զատ բան մը տեսնելու, զգալու անկարող, ամէն բան մոռցած, ամէն բանի համար մեռած՝ կը շարունակէր խածնլ, մինչդեռ՝ իր զազանային մոլուցքին ամբողջ զայրոյթովն ու ծանրութեամբը՝ իրեն փաթթուած, իր վրան ինկած՝ Գիւրտը իր խամբած, ցամքած կուտու թիւնը կը լլկէր անհնարին մոլեգնութեամբ մը:

Բայց կամաց կամաց՝ իւրաքանչիւր պատառին հետ, զոր սաժանքով կուլ կուտար՝ թմբած, լած գիտակցութիւնը արթնցաւ Սառայի ներսիդին: Սկսաւ ինքզինքին զալ, ու հասկցաւ բովանդակ արհաւիրքն ու խաղցու թիւնը իր դիրքին: Խենդութեան փայլակ մը անցաւ յանկարծ Սառայի աչքերէն: Հացի վերջին պատառը՝ զեռ կիսատ՝ քաշեց նետեց իր բերնէն:

Գիւրտը, խապոտ ու վիթխարի հեւքով մը սկսեց էր հննդալ:

Սառայի շրթունքները զողացին վրէժի ու երանութեան անպատում ժպիտի մը, մէջ: Աչքերը կէտ մը գոցեց ու ձեռքը յառաջ տարաւ: Արծաթապատ, շողարձակ դաշոյն մը՝ Գիւրտին մէջքէն կախուած՝ իր արգանքը կը խոցէր: Սառա, ակնթարթի մը մէջ, խլից, քաշեց զայն փայլուն պատեանէն ու Գիւրտին կուրծքին մէջ մխրճեց կատաղօրէն:

Հացին Ուժն էր, որ բերապատկուած կենսականութեամբ մը, խուժեր էր վայրի տղջկան բազուկներուն մէջ:

Արիւնի թանձր ալիք մը ժայթքեց Սառայի երեօթին:

Գիւրտը՝ սրտէն զարնուած՝ զլորեցաւ գիտապատ:

Ու Մահուան հանդիւնը խեղդեց իր կոկորդին մէջ Սիրոյ հննդիւնը:

ԱՍՊԱՏԱԿՆԵՐԸ

Մ Ի Ն Ա Ս Օ Ղ Լ Ո Ւ

Ը.

Կ Թ Ի Ի Ը

ՆՆՆՆՆՆՆՆՆՆ

—Փանկ... փանկ... փանկ...

Ու դիմացէն՝ Աղճա Կիւնայի անտառներն ու ապա-  
սածները կը կրկնեն՝:

—Փանկ... փանկ... փանկ...

Վառօղի ծուխը լեցուցեր է Էյրի Գիւրտի այն փոքրիկ

գոգահովիտը, ուր, ժամ մը առաջ, հայ առպատակներուն երգերը կ'արձագանքէին:

—Փանկ... փանկ... փանկ...

Հրացանի հարուածները իրարու ետեւէ կը պայթին, ու գնդակները, մահաշունչ սուլումներով, անտառին խորերը կը մխրճուին:

Էյրի Գիւրտի բարձունքին վրայ, անտառին թաւուտին մէջ թաքնուած այդ գոգահովիտը ամբիթատրոնի մը ձեւը ունի: Քանի մը վաղնջական կնձնիներ, աւոր կիգորնը, վեհափառօրէն կը տարածեն իրենց ճիւղերը, որոնց անթափանց հովանիին տակ կը բարձրանան խոտի զէզեր, կամ կոճէ շինուած անշուք մարգներ: Գոգահովիտին շրջապատը՝ զէպի հիւսիս՝ Կիւրկէնի անտառով ծածկուած է: Արևելքը՝ Տոմպալախեց հայ գիւղը կայ, որ խիտ թաւուտին ետին կը պահուարտի, կոնակը ապառաժներու շարքի մը տուած: Հարաւակողմը՝ Աղալար թիւրք գիւղը կը ցցուի բլրակի մը վրայ: Իսկ զէպի Արևմուտք թղուկ թուփերու հետ հիւսուած ցանցածեւ մացառուտը կը տարածուի եւ քիչ հեռուն, Քէսթեճ Կէտիչի անտառներուն կը խառնուի:

Վիթխարի կնձնի մը տակ գտնուող մարագի մը մէջն էր որ հայ առպատակները հաւաքուեր, իրենց լեռնային տոնախմբութիւնը կ'ընէին: Վարէն, պզտիկ շամփուտին ներքե ծածկուած առուակին կարկաշը կը լռուեր ու կնձնի հազարստեայ արմատին մէջէն կը ծորէր մէկն այն պաղուկ, սքանչելի աղբիւրնորէն, որոնց ջուրը գինիէն աւելի զովարար ու կազդուրիչ է յոգնած առպատակին համար:

Աչնան առաջին ամիսն էր: Անտառին մէջ հասունցած խնձարն ու տանձը առատօրէն եղներ էին մարագի տախտակամածին վրայ: Ու մեր լեռնարդիները իրենց բնտանեկան փառաւոր ճաշը վերջացնելու վրայ էին այդ վայրի, այլ անուշ ու համեղ աղնդերով, հրք յանկարծ վտանգի սուլոցը փչեր էր:

Կարծեսբունն առաջին մտահոգութիւնն էր եղբր իրենց զաւակներն ու կիները հեռացնել խնամիին կրակէն: Հրացանաձգութեան սկոյնէն անմիջապէս յետոյ, քանի մը կիներու մարագին զոնէն դուրս խուժել ու շուարած ու սարափահար այս ու այն կողմ վազելը տեսնելով՝ Լոզման կանգ առեր էր մէկէն ու սա հրամանը գոռացեր՝ իր ընկերներուն:

—Թո՛ղ տուէք որ այդ կիները փախչին, հեռանան...

Միջահասակ ու հաստկեկ մարդ մըն էր Լոզմանը, ճկուն ու շնորհալի շարժուածքով, նայուածքը՝ սուր ու հմայիչ, ձայնը՝ առնական ու հրամայող: Ճշմարիտ լազ մըն էր ան: Հպարտ ու ինքնաշաւան քալուածք մը սնէր, ու՝ պէտք եղած ատեն՝ գիտեր այժեամբ արագութեամբ սուրալ: Կաշմարտն, զեղաղէմ ու հրապուրիչ՝ Լոզման կը ներկայացնէր մէկն այն լեռնային աւազակի ազուոր տիպարներէն, որոնք ժողովուրդին

աչքին՝ կը խոշորանան, կը հերոսանան ու առասպելա-  
կան համեմատութիւններ կ'առնեն: Տեսակ մը առպե-  
տական ուրիշ ալ զուրկ չէր ան, ինչպէս իր դասակար-  
գին միւս բոլոր հայտատուները: Քիչ անգամ տեսնուած  
էր, որ լեռնագաւառի կիրճերուն ու անցքերուն սար-  
սափն եղող այդ հրոսակները կ'իններու հետ կոշտ ըլլալու  
փորձութիւնն ունենային, ընդհակառակը անոնց արդու-  
զարգերուն ու զոհարեղէններուն յօտենալն անգամ տե-  
սակ մը վատութիւն կը սեպէին այդ աւազակները:

Իրենց պետին հրամանին հնազանդ՝ Լօղմանի ըն-  
կերները ծառի բուններու ետին փութացին նետուիլ, զերծ  
մնալու համար հայ ասպատակներու գնդակէն:

Քանի մը վայրկեան վերջը, կ'իները անհետացած  
էին անառտին մէջ, ու կոխը արդիւող բան մը չի կար  
ա՛լ ետ:

Լօղման իր մարդիկը երկու մասի բաժնած էր. մէկ  
մասը, Կիւլիկ Հասանի առաջնորդութեամբ դէպի մարա-  
զին զուր պիտի յառաջանար ուղղակի, իսկ միւսը, դէպի  
արևմուտք շրջան մը ընելով, պիտի երթար մարազի պա-  
տուհաններէն հայ ասպատակներու փախուստը արգի-  
լելու: Իր ծրագրին յաջողութեանը այնքան վստահ էր  
Լօղման, որ հիմակուց տեսակ մը յանձնապատան ա-  
ռատաձեռնութեամբ, պաշտօնի բարձրացումներ կը խոս-  
տանար իր ընկերներուն:

Հայ քաջերը՝ յանկարծակիի եկած՝ զիրենց պա-  
շարոյներուն ո՛չ թիւը գիտէին, ոչ ալ անոնց ո՛վ ըլ-  
լալը: Իրենց ասպատակի հոտառութիւնը սակայն չէր  
խաբեր զիրենց ու անոնք կը զգային թէ վտանգը ո՛ր  
կողմէն կրնար գալ: Ու անակնկալ մը չէր ասիկա ի-  
րենց համար: Վերահաս վտանգին մշտական մտահո-  
գութիւնը չէր ձգեր զիրենց, ու լարուած ու պատրաստ  
էին զայն գիմաւորելու իրենց կեանքին իւրաքանչիւր  
վայրկեանին: Անոնք գիտէին թէ հանդիպում մը ան-  
խուսափելի էր և անհրաժեշտ: Անխուսափելի՝ քանի որ  
Լօղման ու Կիւլիկ Հասան երկար առեակ է վեր իրենց  
հետքին ինկած էին, որոի շուններու պէս քայլ առ քայլ  
հետապնդելով իրենց: Անհրաժեշտ՝ որովհետև հայ  
կարիճները ա՛լ ձանձրացած էին իրենց վրայ ճնշող այդ  
վտանգի մշտական յաճախանքէն ու կ'ուզէին թափով  
մը, մէկ անգամէն ազատիլ, թեթեւալ անկէ:

Լօղմանի առաջին հրացանաձգութեան հանած ծուխը,  
դանդաղ ուրբաներով դեռ օդին մէջ կը բարձրանար, երբ  
Մինաս, Յովհաննէսն ալ հետը առած, կայծակի նման  
դռնէն զուրս օտարաց: Երկուքը մէկ գետին նետուեցան,  
ու լողի պէս դէպի վարը, ձորին խոտերուն մէջ զլո-  
րեցան, ու վայրկեան մը չանցած՝ պաշարման գծէն  
զուրս կը գտնուէին անոնք: Իրենց այդ շարժումը այնքան  
արագ ու յանկարծական եղաւ, որ Լօղման ու Կիւլիկ  
Հասան անկարող եղան անոնց խուսափումը նշմարելու:

— Կրա՛կ, կրա՛կ, կը հրամայէր Լօղմանը, ու առա-

նեակ հրացանի բերաններէն գնդակները մարազին վրայ  
կը տեղային, ամէն ուղղութեամբ:

Հայ կարիճները, առանց ամենափոքր շուարումի,  
կրակին կրակով կը պատասխանէին: Ու վայրկեան մը  
վերջը, բորակի ու ծծումբի հոտը լեցուցեր էր կոխին  
վայրը ու վառօդին ծուխը կը պարուրէր մարազը թուխ  
ամպի մը պէս: Հրացանաձգութիւնը խուլօրէն կը շա-  
րունակուէր, ու երկու կողմէն ալ բուռն, մոլեգին ճիգ  
մը կը թափէին զիրար գերազանցելու, իրարու տեղի  
չտալու, երկու կողմէն ալ կը զգային թէ այդ ընդդիմա-  
մարտութեան, այդ գերազոյն բաղխումին ելքը իրենց  
ճակատագիրը պիտի վճռէր:

Կիւլիկ Հասան՝ օգտուելով ծուխին թանձրութենէն՝  
մարազին գոռն դէմ բարձրացող խոշոր կնձնիի մը բու-  
նին ետին նետեց ինքզինքը, ճարպիկ ոտիւններով, ու  
հոն վերջնականապէս ստանալով՝ փամփուշտները առ-  
ջին դիզեց ու սկսաւ կրակ տեղալ մարազի այն մասին  
վրայ, ուրկէ գնդակները կուգային և ուր կեցրոնացած  
կը կարծէր հայ ասպատակներուն ուժը:

Ներքը, Կապեա փորի վրայ փռուած էր ու անոր  
քով, իր ամբողջ պարթև հասակովը, տարածուած էր  
Պաղտասարը: Երկուքն ալ զիակի պէս անշարժացած  
էին, իրենց իրանները տափակցած ու գետնին կպած,  
ձեռուներնին միայն կը շարժէին մեքենական արագու-  
թեամբ մը, փամփուշտները մարթինիի ընդունարաննե-  
րուն մէջ դնելով շարունակ ու անմիջապէս կրակելով:

Կիւլիկ Հասանի գնդակները՝ մարազին պատը կազ-  
մող կոճերը թափանցելով՝ ներս կը թռկէին ու մեր երկու  
կարիճներուն շորս կողմը գետնին կը մխուէին, տախտա-  
կամածն ալ պոսկելով:

Մինաս ու Յովհաննէս, քիչ մը հեռուն, ծառի քա-  
րակերպ ու հողէն զուրս ցցուող արմատներուն ետին  
կծկտած՝ իրենց հարուածները կ'ուղղէին դէպի այն կողմը,  
ուրկէ պաշարոյներու կրակին ծուխը կը բարձրանար:

— Ա՛ն է, Լօղմանն է, փոփսաց Մինասը Յովհան-  
նէսի ականջին, եւ երկուքը մէկ տեսան հոշակաւորա-  
ւազակը, որ՝ մարազին արևմտեան պատերուն քով, ան-  
կիւն մը գարանակալ կեցեր էր: Լօղման կը պատրաստուէր  
պատուհանէն ներս կրակելու, երբ՝ նոյն պահուն՝ Մի-  
նասի հրացանէն թռած գնդակ մը ուղղակի անոր կուշտին  
խրեցաւ:

Չայն ձուն չելաւ:

Լօղման, միշտ հոն, կանգուն կը կենար, դաժան ու  
օպանալից, կարծեօ ամէն մէկ վայրկեան իր հրացանը  
պիտի որոտար: Բայց պատիկ շարժում մը իսկ չէր ընե-  
ր ու քարացած, արձանացած կը մնար: Ա՛լ այդ կողմէն ոչ  
մէկ հարուած լսուեցաւ: Լօղմանի հրացանը, իր տիրոջ  
հետ, յաւիտենապէս լռելու դատապարտուեր էր:

Կոխին ամբողջ ընթացքին՝ հայ ու թուրք զիւրա-  
ցիները զուրս թափեր էին և զոգահօվտին եզերքը, ան-

տառին մէջ ցրուած անհամբեր կը սպասէին վճռական ելքին: Աղալարի թիւրք բնակիչները՝ Լօղմանի և Կիւլի Հասանի վրայ աշըգներու յօրինած դիւցազնեղբայրութիւնները կ'երգէին, տեօակ մը լաւատես հպարտութեամբ: Մեծ տօնախմբութեան մը նախընթացին կը կարծէին ինքզինքնին ու իրենց մօլլաները՝ հայ կըտորիներուն պարտութեանը վրայ մարգարէանալով՝ զիրենք կը մղէին թալանի պատրաստուելու: Հրացանաձգութիւնը կը շարունակուէր սակայն ու ամենքը իրենց տեղը գամուած կը մնային, զիտնալով որ քանի մը սխալ քայլեր զէպի գողահովիտը՝ կրնային մօլորուն գնդակի մը մահացու հանդիպումին առաջնորդել զիրենք:

Մարագի հիւսիսային կողմը, խիտ ծառերու շարքին տակ, իր շորքած ծունկուրներուն վրայ կծկտեր էր Պառու Եուշանը, իր քով նստած էին իր երկու հարօճըն ալ, իսկ երկու թոռները՝ սարօտիէ գունաթափ՝ վղերնին ներս քաշած՝ մէյ մը մամիկին, մէյ մըն ալ իրենց մայրերուն երեօր կը նայէին: Պառուը կ'աղօթէր, անոր աղօթքը Կոնիին աղօթքն էր, անիկա Աստուծակ կը խնդրէր, որ իր կորիւններուն գնդակը անվրէպ ու շիտակ ուղղէր: Հարօճը իրեն կը ձայնակցէին, ու գիտէին, վստահ էին որ իրենց մաղթանքը պիտի լուսէր: Մինասը միշտ յաղթեր, զարկեր, սատկեցուցեր էր:

Լուսեան կրակէ կրակ կը վազէր, դիւային արագութեամբ մը, երբեմն չորեքթաթ կը քալէր, երբեմն, փորին վրայ սողալով, կոնիին կեղրոնացած տեղը կ'երթար, ու իր այդ յանդուգն ու յանձնապատան խիզախութեանուն մէջ քանի քանի անգամ՝ իր ականջին մօտէն անցնող գնդակներու սուլելը լսեց: Բայց վախ մը, փոքրիկ սարօտու մը իսկ չէր զգար ան: Հրացաններու յաջորդական որոտէն կարծեօ իր հոգիին ու միտին մէջէն հրճուած՝ կ'ոտոտտէր, կը պարէր ան խօլաբար: Իր այդ վայրագ յափշտակութեան մէջ, Լուսեան յանկարծ ցնցուեցաւ: Մօթ գաղափար մը անոր ճակատը կնճռոտեց ու իր նուրբ շրթունքները կծկուեցան: Մեթալիկը և անոր խղճալի վիճակը միտքն ինկաւ: Ան էր որ ժամանակին հասեր էր ասպատակները զգուշացնելու վերահասօ վճարանգին դէմ: Ու հիմա մացառուտին մէջ ձգուեր էր, անտէր, անտիրական գիակի մը պէս: Լուսեա գէպի հոն վազեց անձկագին:

Մեթալիկ, իրմէ քիչ հեռուն, զոգահովիտին մէջ մղուած կոնիին աղմուկն ու միտը չէր լսեր: Գունատ ու դարկահար գէմքը գէպի երկինք, աչքերը զոցած, ու ձեռքերը մեռելային թուլութեամբ մը երկու կողմը ձգած՝ կռնակի վրայ երկնցեր, պառկեր էր ան, առանց կենդանութեան նշան մը ցոյց տալու: Անոր կուրծքին ծրուեցաւ Լուսեան և սկսաւ ուշադրութեամբ սիրտը մտիկ ընել: Կը բարբախէր:

Լուսեա չորսդին ինկաւ ու՝ պահիկէ մը՝ գէզ մը չոր խօտ ու հինումին լաթի կտորուանքներ անթաժ՝ բերաւ

և այդ կիսամեծ մարդուն վրայ լնցուց և սկսաւ գոհունակ դէմքով մը զայն դիտել:

Վարէն հասնող կոնիին ձայնը նորէն զինքը հրապուրեց: Լուսեա մոռցաւ Մեթալիկը ու վազեց: Յանդըգնութիւնը, այօ անգամ, մինչեւ մարագին քովերը մղեց զինքը: Հոն, հինաուրց ծառի մը կոճին ետեւ կծկտելով՝ ականջ տուաւ հոգեւին իր կարիճ սիրականներուն գնդակի երգերուն:

Մինչեւ այդ ատեն, կոնիւր կեղրոնացած էր կապտի և Կիւլի Հասանի միջեւ: Երկուքն ալ դիւցազնական յամառութեամբ մը կը շարունակէին: Երկու կողմէն ալ գնդակները դուր ու դադար չունէին ու վայրենի վժոցով մը մէկ քաջէն միւսը կը սուրային: Կիւլի Հասան՝ հօկայ կնձնիին ետեւ ամրացած՝ անընդհատ կը կրակէր, վստահ ըլլալով որ հայ կարիճներուն գնդակը իրեն չէր կրնար հասնիլ ու կը մտածէր ալ թէ մարագին մէջ կերպով մը բանտարկուած ու գուրսի հետ յարաբերութիւն ունենալէ բոլորովին դադրած՝ անօնց ուղղամթերքի սահմանափակ պաշարը շուտով պիտի հատնէր ու կարճ ժամանակի մէջ անձնատուր ըլլալու ձայն պիտի բարձրացնէին անոնք:

Կապետ անշարժ երկնցած, կարծեցեալ հաշուով մը, իր գնդակը կ'ուղղէր կնձնիի ծառին, որուն ետեւէն հրացանի մը կրակը կը տեսնէր: Իր գնդակներէն եօթը հատը յաջորդաբար միկնոյն ծակին մէջ թիմուեր էին, ու կնձնին իր անվկանդ կուրծքովը վահան հանդիսացեր էր Կիւլի Հասանին, որուն կրակը չէր գաղթեր ու եթալով աւելի կը ուստկանար:

Կապետ ահռելիօրէն վտանգաւոր տաղանայի մը մէջ էր: Անհրաժեշտ պէտք էր ելք մը գտնել: Գնդակները կը հատնէին ու կը զգար որ զեռ թշնամի մը չէր տապալած: Կատղեցաւ, քֆրեց: Ու՝ հրացանաձգութիւնը շարունակելով հանդերձ՝ սկսաւ մտմտալ: Հնարքներ փնտոց, միջոցներու վրայ խորհեցաւ: Իր առջեւ բացուող նեղ ծակերէն կ'ուզէր բան մը տեսնել, իր հետ չափուողին դիրքը կ'ուզէր ճշդել: Համբակի մը ձեռքէն արձակուած գնդակներ չէին ատօնք: Միկնոյն ծակէն, իրարու ետեւէ, տասնեակներով ներս կ'անցնէին անոնք, կա՛մ Լօղմանը և կա՛մ Կիւլի Հասանը ըլլալու էր, կը մտածէր կապետը: Անկարելի էր ուրիշ մը ենթադրել:

Պաղտառար շատօնց հատցուցեր էր իր փամփուշտները, ու հիմա այդ անգէն աթիւժը վառօղի ծուխ հոտուրտալով կը շատանար ու իր աչքերը երբէք չէր վերցըներ Կապետին վրայէն, որ կը կրակէր շարունակ: Յաճախ իրենց նայուածքները իրարու կը հանդիպէին ու երկուքն ալ կը զգային թէ իրենց դրութիւնը եթալով կը դժուարանար և անտանելի կը գաճար այլ ևս: Եւ սակայն երկուքն ալ յուսահատութեան ամենափոքր նշան մը իսկ չէին ցոյց տար:

Գնդակ մըն ալ արձակելէ վերջ, վիրաւոր առիծի ձայնով մը կ'ապետ մոնչեց.

— Զարնուեցայ... մեռայ...

Ու ասպատակի սուր աչքերով սկսաւ իր առջեւ բացուած ճեղքէն զուրսը դիտել: Երբ իր անթափանց խաւ մը իր ու իր հակառակորդին միջեւ եղող միջոցը կը խափանէր:

Կապետի ահարկու աղաղակէն Պաղտատար ինքն ալ սոսկացած՝ շշմուկ, մնացեր էր, որովհետեւ զարնուողի երկոյթ չունէր բնաւ կ'ապետը: Ընդհակառակը, հրացանը երեսին կազմ և պատրաստ էր կրակելու: Հասկցաւ որ խաղ մը կար ու լուռ սպասեց:

Կիւլիկ Հասան՝ յանկարծակիի եկած այդ ահոնելի, խեղդուող ձայնէն՝ հրացանաձգութիւնը դադրեցուց: Երկար դնդակահարութենէ վերջ, հասկցած էր թէ դիմացինը մէկ հոգի մըն էր միայն, իրեն արժանի հակառակորդ մը: Սիրտը ցնծութեամբ լեցուեցաւ: Գիտէր որ ան՝ եթէ սպաննուած ալ ըլլար՝ մարագին չորս պատերուն մէջն էր ու իր աչքերը չէին կրնար հաստ կոճերէն ներս թափանցել: Բայց հետաքրքրութիւնը ամէն բանէ աւելի ուժով էր իր մէջ այդ պահուն ու իր զոհին զոնէ ստուերը նշմարելու աենջանքը ամէն ուրիշ նկատումի կը յաղթէր: Իր աւազակային սուր բնազդը սակայն յամառեցաւ զայն արդիւն անզոյշ ու յախուռն մզումներու հպատակելէ, և Հասան՝ իր կիտակէն միայն զուրս ցցած կնձիի պատսպարանքէն՝ սկսաւ մէկ աչքով մարզը դիտել:

Կեղծ ճգնաժամի գոտոցէն յետոյ, կ'ապետ ա'լ հըրացան շարպեց: Շունչը ներս քաշած, լարուած ու շարժութեամբ մը զուրսը կը դիտէր, երբ ուրախութիւնը յանկարծ անոր երեսը փայլատակեց: Գլխու մագերու նմանող անորոշ երևոյթի մը շարժիլը տեսնելէ կնձիին ետին: Կապետ կայծառ քաշեց ու հրացանին որոտէն վերջ, տապալակող մարդու մը մահուան հանդիսը իր ահանջին հասաւ: Գնդակը, կնձիին հաստ կեղևը երկու մատ թանձրութեամբ պատռելով, կիւլիկ Հասանի քնատեղին մէկ կողմէն մտած՝ միւսէն զուրս ելած էր:

Կապետ վեր վեր ցատքելու, պարելու, երգելու խօլ փափաքով մը գալարուեցաւ, բայց ասպատակի խոհեմութիւնը առեն մըն ալ զայն գետնին զատած պահեց: Կապետ Պաղտատարի կուշտի մշտեց ու ցած ձայնով մը ու ճառագայթող ժպիտ մը զէմքին վրայ՝ ըսաւ անոր.

— Մարդը զժոխք զնաց, Պաղտատար, թէ զքեզն պատրաստէ'...

— Իրա՛ւ կ'ըսես, հարցուց Պաղտատար զարմանքով:

— Հրացանիս զնդակը վկայ, սատկեցաւ, ինդաց կ'ապետը:

Ու իրա՛ւ, կ'ապետի վերջին հարուածէն յետոյ, ա'լ ո և է զնդակ շարձակուեցաւ կնձիի ծախին ետեւէն, ու ծուխը սկսաւ կամաց կամաց վերնալ ու ցրուիլ:

Պահ մը վերջը, գոգահովիտն ու ամբողջ այդ լեռնազաւառը աղմկող հրացանի որոտը իսպառ վաղրած էր ու գերեզմանական լռութիւն մը տարածուած՝ ամենուրեք: Մահուան ստուերն էր անցեր կարծես այդ տեղէն:

— Ուրի՛նք է՛լ, Պաղտատար, հրամայեց կ'ապետը, գործերնիս լմնցաւ:

Պաղտատար տեղէն վեր թռաւ, ու զէպի զուրս կը յառաջանար, երբ կ'ապետ պատուհանը ցոյց տուաւ անոր: Հազիւ զլուխը պատուհանին մօտեցուցած՝ Լօղմանի կանգուն դիակը Պաղտատարի աչքին առջեւ ցրցուեցաւ: Ասպատակը կամաց մը ետ քաշուեցաւ ու իր ընկերոջ ահանջին փոփոաց. կ'ապետ զգուշութեամբ պատուհանին քով զնաց ու Լօղմանի կուրծքին կրակեց: Դիակը, միշտ կանգուն, պզտիկ շարժում մը անգամ չըրաւ: Պաղտատար ու կ'ապետ քանի մը վայրկեան ալ սպասեցին շնչասպառ, և վստահ ըլլալով որ այլ եւս վտանգ չի կար՝ երկուքն ալ պատուհանէն զուրս նետուեցան: Պաղտատար Լօղմանի դիակին մօտեցաւ, ու անոր հրացանն ու փամփուշտները կողոպտեց: Լօղման մահուան մէջ տակաւին ստքի կը մնար, անողք պարտութեան մը նախատինքին յամառելով չհամակերպիլ, չզիջանելով կարծես հաւտալ իր զարնուած, սպաննուած ըլլալուն, ստքի կը մնար արձանացած ու անոր զէմքը ղեկը պահել իր սպաննական դաժան արտայայտութիւնը:

Պաղտատար Լօղմանի հրացանը ձեռքին ու փամփուշտները կուրծքին՝ գերմարդկային ուժի մը աւելնալն զգաց իր մեջ, ու տիրական քայլերով կ'ապետին հետեւեցաւ: Երկուքը մէկ զէպի արևմուտք դիմեցին, ու պահ մը վերջ, անտառին մէջ անյայտացան:

Լօղմանի դիակը՝ ղեռ կանգուն՝ իրենց հետեւէն կը նայէր կարծես...

(Շարունակելի)

ԹՐՔԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ



Վիրքոս Պեռա, միջազգային քաղաքական հարցերու մէջ իրաւամբ հեղինակութիւն և կատարող երիտասարդ հայասեր հրատարակագիրը, ֆրանքոփոքր վեճիկ ասորի ու զայն կոտորէն համադրող, հետեւեալ շահատեղեակ ու հմտալից ռաւոնմասիրութեան հրատարակած է « Բիրվիտար Բաթի » ի վերջին քիտիկ մէջ:

1901 օգոստոս 27ին մեր զեսպանը Կ. Պոլիսը թողուց, ֆրանսական եւ թիւրք կառավարութեանց միջև յարաբերութիւնները խզուեցան: Նոյեմբեր 3ին, ծովակալ Քայեառի նախաւսմբը թրքական ջուրերը կը յարտանէր, 7ին՝ մեր զինուորները ոտք կը դնէին Միթիլին, 8ին՝ ժաքատունն և հեռագրատունն զրաւուեցան: 9ին՝ իրկունը, սուլթանը տեղի կուտար մեր բոլոր պահանջումներուն: Օգոստոս 27էն մինչեւ նոյեմբեր 9, ամբողջ վեց շաբաթ, սուլթանը զիմադրած էր: Կարծես ոչինչ զինքը կը վրդովէր, ոչ իսկ արտաքսուած իր պաշտօնական ու զազանի լրտեսներուն որոնք հոս՝ մեր մէջ՝ կը լրտեսեն ամէն ցեղի ու կարծիքի տարազիր տաճկոստանցիները: Իր զեսպանէն՝ Միւնիթի Պէյէն՝ վերջ, անոր բոլոր օտորագաս զորձակատարները՝ Ֆերիտուն Պէյ, Սինօպեան և Նիքոյալիսէս, սահմանազուրկ անցան: Այլ Սուլթանը լուր չունէր այն ահարկու Բարիզէն, ուր, ամէն վայրկեան, մութին մէջ, հեռուէն, զաշոյններու շողալը կը տեսնէ: Իր կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով, Ապտիլ Համիտ անմատչելի կը մնար երկիւղին: Սուլթանին այս անգորդութիւնը անբացատրելի պիտի ըլլար, եթէ իր ետևէն ունեցած չըլլար զօրաւոր նեցուկ մը: Եթէ մէկը բռնած չըլլար այս զողակար հոգին, վանած չըլլար անոր խուճապները, պահպանած՝ անոր սին յոյսերը, կամ եթէ անոր վախին զէմ օգորած չըլլար միակ ազգու հնարքով՝ ահարկութիւնով:

Այնչափ Միւնիթի Պէյ և անոր զորձակատարները կեղծ յոյսեր շոյլեցին իրենց փատիշահին: Մեր քաղաքականութեան ներքին զժուարութիւնները շահագործելով՝ անոնք հաւատեցին, թէ մեր նախարարութիւնը երբեք իր մեծամասնութեան չի պիտի հարկադրէր միջամտութիւն մը ըստ երեւոյթին նպատաւոր միմիայն գրամատիրական և կրօնական շահերու: Ըստ իրենց՝ կը բաւէր միայն բանակցութիւնները ձգձգել մինչեւ Խորհրդարանին բացումը, եւ խնդիրը քշել այնպիսի հոգի մը վրայ որ ձեռնտու ըլլայ Խորհրդարանական քաջընդունելու: Ֆրանսական պարութեան երկու տեսակ պահանջումներ կը պարունակէր, մէկը զուտ գրամական (Քարափներու խնդիր, Լորանտօի և Թուպիսիի աննելիքներ և այլն), միւսը՝ քաղաքական (Կրօնական, դպրոցական և ասպնջական հաստատութեանց վերաշինութիւն ու ազատ գործածում, թեւարկութիւն Լատիններու): Խորհրդարանական պարկեշտութիւնը պիտի թունդ ելլէր, եթէ միայն գրամական խնդիրները մէջ տեղ զրուէին: Եւ ամբողջ տաօը շաբաթ, Դուսը Լորանտօի և Թուպիսիի աննելիքներուն խօսքը միայն ըրաւ:

Երեսուն տարիէ ի վեր թուրք դատաւորները քննած, վիճած և օրինաւոր ճանչցած էին այդ աննելիքները: Խնդիր էր սակայն գիտնալ թէ ֆրանսացի նախարարները պիտի համարձակէին աստորագրել թուրք դատավճռի մը պատճէնը, պիտի համարձակէին պահանջել իրենց

ազգակիցներուն համար 100ին 12 տոկոսի օրինական սակի թրքական օրէնքին առաւելութիւնը, պիտի կրնային բացատրել ֆրանսական Խորհրդարանի մը թէ՛ թրքական օրէնքի օրէնքներու բանելովը միայն, 1875ին 100,000 սակի փոխառութիւն մը 1,800,000 սակի աննելիքի մը կը բարձրանար 1901ին: Իրաւ որ ֆրանսական կառավարութիւնը երբեք սնեցած չէ այդպիսի փառասիրութիւն մը: Նախարարը Խորհրդարանին յայտնեց միայն, իր Նոյ. 4.ի ճառովը, թէ տաճիկ դատաւորներու Լոռանտօի ժառանգորդներու վերադրած 1,800,000 սակին չէր որ պահանջած էր այլ միայն 253,000, զոր կայսերական դատախազը իր պահանջագրին մէջ, անոնց իրաւունքը ճանչցած էր, ամէն պարագայի մէջ:

Բայց Միւնիթի Պէյ խոստացեր է իր տերոջը, թէ այդ բացատրութիւններէն առաջ ֆրանսական նախարարը պիտի իյնար: Անկարելի է սակայն որ Ապտիլ Համիտ, ամբողջ տաօը շաբաթ, իր յոյսն ու կեանքը յանձնած ըլլայ այս լաւատես մարգարէին զուշակութիւններուն միայն: Արդէն յօսը չէ իր գործերուն շարժառիթը. վախն է միայն որ երկարատեան կ'ազդէ իր կամքին վրայ: Ֆրանսական սպանալիքներու երկիւղը հակակշռելու համար պէտք եղաւ որ ուրիշ սպանալիքներ ծագէին: Սուլթանին քաղաքականութիւնը ուրիշ զօպանակ ունեցած չէ երբեք. վայրկեանին տէրը, Փավօսի կամ նախարար, այն ճարտարարուեստագէտը եղած է միշտ որ խրտուիլակի նոր խաղ մը գտած է: Թուսական արջը, անգլիական կամ գերմանական աշակուհիները, հայ օստանան, կրօնական վիշապը և ժողովրդային հիգրան կարգաւ այս նպատակին կը գործածուին: Ֆրանսական պահանջներուն մէջ կար խնդիր մը որ կրնար ատոնց տեղը բռնել: Նոյն իսկ Սուլթանի աչքին ամենէն կարեւորն էր ատիկա, զոնէ այն որ կը թուէր ամենէն աւելի ուժգնակի շահագրգռել մեր զեսպանը—Քարափներու խնդիրը:

1890 Նոյ. 7ի պայմանագրութեամբ, Սուլթանը և իր կառավարութիւնը արտօնած էին ֆրանսական ընկերութեան մը Ռսկեղջիւրի երկու եզրքներուն վրայ քարափներ կառուցանելու և շահագործելու: Ընկերութիւնը, քարափներու կառուցման համար պայմանագրութեան մէջ պահանջուած բոլոր պայմաններուն իր ծախքովը զոհացում տալէ յետոյ, 95 տարի անոնց սեփականատէր պիտի մնար և պիտի գանձէր հետեւաբար պայմանագրութեան մէջ մանրամասնուած բոլոր եկամուտները: Միւս կողմանէ, խառն հատոյթներուն հարիւրին տաօը կայսերական գանձուն պիտի մճարուէր, ու թուրք կառավարութիւնը պիտի հսկէր ընկերութեան բոլոր գործողութիւններուն:

Պայմանագրութիւնը այսպէս հիմնուած, իր ձեռին ու ոգիին մէջ յարգուած, երկու կողմին ալ ապահով և ստուար շահեր կը խոստանար: Ընկերութիւնը թէեւ ահագին ու անմիջական ելքեր, բայց նաեւ կարեւոր եկամուտներու հեռապատկերը ունէր իր առջեւ: 1890ին Կ.

Պօլիս Արեւելքի մեծ շահան էր տակաւին . Սե ծովու նաւերը եւ Փոքր Ասիոյ սայլերը հոն կը բերէին զեռ բոլոր վաճառականութիւնը հայ եւ պարսիկ երկիրներու : Կ. Պօլսոյ քարափները ուրեմն կրնային ընդհանուր մթերանոցը ըլլալ Եւրոպայի եւ Արեւմտեան Ասիոյ միջև : Տաճիկ կառավարութիւնն ալ, իր կողմէն, առանց քսակին բերանը բանալու, կը շահէր նաւահանգիստ մը, քարէ շէնքեր, վճարօրով ապահով տուրքեր, ապրանքի ու դրամի նոր հոսանք մը, զտուած ու կլորիկ դրամադուլուս մը, եւ քաղաքակրթութեան ու յառաջդիմութեան համբաւ մը Եւրոպայի մէջ : Ֆրանսական ընկերութիւնը գործի սկըսաւ : 1895ին քարափները կառուցուած էին, եւ յուսախափութիւնները կըսկսէին : Երկու ղէպքեր, Փոքր Ասիոյ հայկական շարժերը եւ ուստական ազդեցութիւնը Պարսկաստանի մէջ, վեր ի վայր շրջեցին՝ քարափներու առեւտուրի մասին բոլոր կանխատեսութիւնները :

Հինգ տարիէ ի վեր Կ. Պօլսոյ անգլիական հիւպատոսները մատնանիշ կընեն ուստ վաճառականութեան ձեռննկութիւնը պարսկական հրապարակներու վրայ : Անգլիական բաժակեղէնները եւ խոտաւաճարը վտարուած են Կասպից ծովէն, Անգրիովկասէն, եւ Իրանէն : Այսօր Աստրախանի, Պաթումի եւ Օտէսայի մթերանոցներն են որ տեղը բռնած են Կ. Պօլսոյ որ անգլիական ապրանքներու մթերանոցն էր : Ատկից է որ, 1890 էն ի վեր, Կ. Պօլսոյ շահաներն ու քարափները իրենց կարևորութեան կէտը կորսնցուցած են : Միւս կողմէ, 1890 ին, Կ. Պօլիս հայ հրապարակ մըն էր, հայ ազգին ու գործառնութեանց կեդրոնը : Ասիոյ ճամբաներուն վրայ հայերը կը ճառագայթէին մինչև Կիպրոսի եւ Սուրիոյ ծովերը, կոտորածները՝ այս առևտուրը ջնջելով՝ ամէն յարբերութիւն կտրեցին Կ. Պօլսոյ եւ հեռուոր հրապարակներու միջև, «Այսօր, կը գրէ անգլ. հիւպատոս Պ. Մառէլ, Կ. Պօլիս, ամբողջ թըրքական պետութեան, Պարսկաստանի եւ Պալքանեան երկիրներու բաշխումի կեցողնը ըլլալէ հետո՝ իր անմիջական շրջականերուն համար պարզ ուտեստեղէն հայթայթող հրապարակի մը կարգը ինկած է» :

Պ. Պէռու հոս կը բացատրէ թէ ինչպէս կացութիւնը 1897 էն մինչև 1900 կը վատթարանայ հետզհետէ : 1893 ին քօլէոան, 94 ին երկրաշարժը, 95 ին Փոքր Ասիոյ շարժերը, 96 ին Կ. Պօլսոյ շարժերը, 97 ին, 98 ին Կրէտական ապստամբութիւնը, եւ թիւրք-հելլենական պատերազմը, 90 ին մանտախտի օպասնալիքները գործերը կ'աւերեն : Միևնոյն ատեն Եւրոպայի եւ Ասիոյ երկաթուղիները ղէպի Սելանիկ ու Իզմիր կը դարձնեն Մակեդոնիոյ եւ Անատոլիոյ հոսանքները : Իրաց այս վիճակին առջև անգլիական հիւպատոսական վերջին տեղեկագիրը կասկած կը յայտնէ թէ կրնայ պատահիլ որ քարափները թիւրք կառավարութեան վերագնուին :

Դուռը տրամադիր չի թուիր Գարափներու վերագնման օրովհետեւ վերջը եւ նախարարները, ու եւ շահ կամ

խոշոր կրծօն չեն տեսներ ատոր մէջ, բայց Սուլթանի անձնական նկատումները կը հարկադրեն այդ վերագնումը, որովհետեւ հազիւ կառուցուած քարափները մտահոգութեան ու վախի ազդեւորներ դարձան իրեն :

Ընկերութեան պայմանագրութեան 2րդ. յօդուածին գործադրութիւնը բացարձակապէս աննպաստ էր հաւանքներու եւ խայրխաձինքներու շահուն՝ որոնք կ'ապրէն ճամբորդներ եւ վաճառք ցածաք հանելով : Զարդի այս պատուական արհեստաւորները կը սպառնան Պալատին ղէմ դարձնել հայու արիւնէն զեռ առջ իրենց սօփաները : Ապտիւ Համիտ՝ ժողովրդային հիդրաին առջև զողահար՝ պէտք է գրկէ ընկերութիւնը կարգ մը իրաւունքներու կիրարկումէն :

Յօդուածագիրը, Ընկերութեան պայմանագրութեան 22րդ. եւ 23րդ. յօդուածներու յարուցած դժուարութիւններուն վրայ խօսելէ վերջ, կը շարունակէ :

Բայց Գերմանիոյ կայսրը, Ապտիւ Համիտի ղեկավարութեանը, ան ալ Անատոլիոյ գերմանական երկաթուղիին համար նաւահանգստի մը արտօնութիւնը կը պահանջէ : Վոսփօրի ասիական եզերքին վրայ, Հայտար Փաշա, Պօլսոյ ղիմաց, գերմանները քարափներ շինելու իրաւունքը կը օտանան, 1899 Յունվարի իրատեղով մը : Այս ասիական քարափներուն ղէմ, եւրօպական քարափներու ֆրանսական ընկերութիւնը տարկութիւն մը շունի ընելիք : Իր պայմանագիրը Ոսկեղջիւրի եւրօպական եզերքները կը մասնորոշէ : Գերմանացիները սակայն մաքսատուն մը կուէն իրենց ասիական քարափներուն վրայ : Ասոր վրայ ֆրանսական ընկերութիւնը կը բողոքէ թէ ասիական իր մաքսային մենաշնորհին ղէմ հարուած մըն է : Սուլթանը՝ ֆրանսական ընկերութեան իրաւունքները ճանշնալով կը մերժէ մաքսատան արտօնութիւն տալ գերմանացիներուն : Եւ ահա, գերմանական զեսպանատունը կը օպանայ, Կիլիսիոյ կայսրը կը բարկանայ : Սուլթանը օտարուած է տեղի տալ. բայց ինչ պիտի ըսէ, նայինք, իր միւս մեծ բարեկամը՝ ֆրանսական զեսպանը :


1893ի սկիզբը Պ. Քօնսթան հասաւ Քամպօնի տեղը բանելու : Առաջին ունկնդրութենէն իսկ Ապտիւ Համիտ օրտառուչ գորով մը ցոյց տուաւ նոր զեսպանին . յուզումով յիշեց այն անձնական ծառայութիւնները որ իրեն մատուցած էր, իր վերջին նախարարութեան մէջ գտնուած առեն, ներքին գործոց նախկին նախարարը : Պէտք է զիտնալ որ Պ. Քօնսթան կը հասնէր՝ ներկայիս՝ աշխարհի մեծագոյն դաւադրութիւնները զերեւողի համբաւովը : Ապտիւ Համիտ կ'օւզէր իրեն շահիլ Պուլանժիզմին տապալուողը : Այդ առաջին ունկնդրութենէն իսկ անմիջական հաւանութիւն խոստացաւ զեսպանին ապագայ բոլոր խնդրանքներուն : Եւ այդ առաջին տեսակցութեան իսկ զեսպանը արդարութիւն պահանջեց իր ազգակիցներուն համար : Հայտար Բաշայի գերմանացիներուն արտօնուած մաքսատունը ֆրանսական ընկերութեան շահերուն կը վը-

նասէր. կայսերական արդարադատութիւնը, ուրեմն, իրաւացի փոխարինութեանց հարկը պիտի տեսնար: Նորն հետայն Սուլթանը յանձնառու կըլլայ այդ փոխարինութեանց:

1899 Մարտին ընկերութիւնը Պալատ կը ներկայացնէ իր պզտիկ հաշուեցուցակը. իր հարկերուն ստորեջերուն վրայ նուազումը կը պահանջէ: Պալատը միահամուռ կը մերժէ այդ նուազումը որ ուղղակի պիտի փաստէր իրենց իւրաքանչիւրին եկամուտներուն: Բայց ի՞նչ ընել: Նորին Վեհափառութեան ատաշին քարտուգարը, Թահսին Պէյ, Գերմանիոյ մարդն է՝ անիկա խորհուրդ կուտայ Ֆրանսական բոլոր խնդրանքները մերժելու: Երկրորդ քարտուղար, Իզզէթ Պէյ որ իր տիրոջը սէրը դիտէ Պ. Ֆոնսթանին համար, աւելի հաշտարար միջոցներու կը մղէ: Ամբողջ 6 ամիս (Մայ. — Հոկտ. 1898) Սուլթանը կը վարանի իր երկու ֆալօտներուն միջև: Գաղափար մը երթալով տեղ կ'ընէ իր մտքին մէջ: Այլ քարափները՝ օտարներուն ձեռքին մէջ՝ յանտեսական անհամաձայնութեանց պատճառ մը չեն միայն, անոնք մահացու վտանգներ կրնան ստեղծել Վեհապետին ու կայսրութեան: Առանց այդ քարափներուն, հայ յեղափոխականները երբէք չի պիտի կրնային ցամաք ելլել, երբէք Պանք Օթոմանը գրաւուած չի պիտի ըլլար. պէտք է ուրեմն սեփականատէր դառնալ քարափներուն, որպէս զի Վեհապետին անձը մշտնջենական վտանգներու մէջ չըլլայ: Կայսրութեան լմանութիւնն իսկ վտանգի մէջ է: Զինատեսանի օրինակէն կը տեսնուի, թէ ի՞նչ հետեւանքներ կունենայ հոգային արտօնութիւններու ուժովը: Քարափները կայսրութեան մէկ մասնիկն են Եւրոպայի ձեռքին մէջ. ընկերութիւնը կը պահանջէ քարափներուն ետին, ծոփուն մէջ գոյացած դետինը: Վաղը, անիկա պիտի պահանջէ եզերող քաղաքներն ալ: Քաղաքներու վերագնուածի գաղափարը կը հարկադրուի: 1899 հսկ. ին վերագնուածի սկզբունքը պայմանագրուած է ընկերութեան արտօնուած ստորեջերու նոր թարիֆային մէջ:

(Մնացածը յաջորդ ակզամ)

### ԹՂԹԱԿՏՈՒԹԻՒՆՆԵՐ



### ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

Պօսթոն, 17 Դեկ. 1901

Ամերիկայի Հնչակեան Մասնաճիւղերու 15րդ Պատգամաւորական Ժողովին լրանալէն վերջ, հրապարակային ժողով մը ունեցանք հոս, մեծ սրահի մը մէջ

որ նեղ կուզար՝ խանգալառ հետաքրքրութեամբ զիրար հրմշակող հինգ հարիւրի մօտ ներկաներուն: Տեղական թերթերու լրատուներն ալ եկած էին:

Այս հրապարակային ժողովը արտակարգ յաջողութիւն մը ունեցաւ, շնորհիւ այն Հնչակեան ընկերներուն, որոնք զանազան քաղաքներէ Պօսթոն փութացած էին, Պատգամաւորական Ժողովին աթիւ:

Բեմին վրայ նստած էին հայ վարդապետը, հայ պատուելին, հայ տօքթօրը, հայ յեղափոխական քարոզիչը և իր ձեռուլները գործարաններու տաժանքին մէջ մրտած հայ գործաւորը: Քով բովի, ամենքն ալ յեղափոխական դադափարովը եղբայրացած՝ հոտ եկեր էին իրենց սրտին յուզումը, իրենց հաւատքին զօրութիւնը, իրենց իտէալին գեղեցկութիւնը արտայայտելու այդ խուռն բազմութեան ու զայն հրաւիրելու որ հաղորդակից ու մասնակից ըլլայ սկսուած պաշտելի Գործին, որ միայն պիտի տայ Հայուն իր ազգային անհրաժեշտ ու արդար ազատագրութիւնը:

Հոս, այդ սրահին մէջ հաւաքուած մէկ Հայրենիքի զաւակներուն, մէկ ճակատագրի շղթայուածներուն համար, զասակարգային, կրօնական ու աղանդական նկատումներն ու անշատումները գոյութիւն չունէին: Հայ բանւորը հաշտ աչքով կը նայէր հայ հարուստին, որ իր գէմը նստած էր, հայ պատուելին եղբայրական ձեռք կը պարզէր հայ վարդապետին, որ իր բովը կը կանգնէր: Ամենքն ալ Հայ էին ու Հայութեան մէջ խորութիւն զնելու ամենագոյն փորձութիւնն իսկ չէին կրնար ունենալ: Հայ ազգին տառապանքը, որուն ենթարկուեր էին ամենքն ալ՝ աւելի կամ նուազ չափով՝ զբնանք միացուցեր, խտացուցեր, մէկ հոգիի մէջ ձուլեր, մէկ կրակով վառեր էր կարծես:

Խօսողներն ալ ներշնչուած էին այդ օրը: Անոնց շուրթերէն կախուած՝ սարոռագին հետաքրքրութեամբ մը, անյագօրէն մտիկ կ'ընէին զիրենք, եւ երբ՝ ունկընդիրներու յափշտակուած արտայայտութենէն ու համակիր ու ջերմեռանդ ուշադրութենէն քաջալերուած՝ առանց անկեղծ ու զգածեալ շեշտերով կը պոռթկար, յանկա՛րժ, որահին մէկ ծայրէն միւսը, որոտընդոտ ծափահարութիւն մը կը փրթէր, կը զղրղացնէր ամբողջ շէնքը: Ու յեղափոխական Գաղափարին առաքեալները քանի կը խօսէին՝ այնքան կը տաքնային, կը բորբոքէին, կը տարուէին, եւ իրենց խօսքերը աւելի ուժով ու շեշտակի կ'երթային մխուիլ հանդիսականներու սրտին, կը ցնցէին չղինուորագրուածները ու զէպի յեղափոխական կազմակերպութիւն կը մղէին զանանք:

Ի՞նչ քաղցր ու սրտապնդող էր հոտ լսել Աւետարանի ու Խաչի վարդապետին յեղափոխական քարոզը: Քարերով հեղութեան, խոնարհութեան, հլու համակերպութեան թմբեցուցիչ ու ստրկական խօսքեր ըօին Հայուն անոր նախորդները: Բայց ասիկա՛. Խաչին հետ

սօսրը հաշտեցուցած է ան, ու՛ Աստուծոյ արքայութեանն առաջ՝ արիւնին դաշտը կը հրաւիրէ իր ունկնդիրները ու ընդգլուսին, կրօնքը կը քարոզէ անոնց: Ու ժողովուրդը ծափ ծափի ետեւ կուտար, ու այդ ողորուած ժխորին վրայ յեղափոխական կղերին զեմքը կը ճառագայթէր:

Ամերիկայի մէջ տարօրինակ չէ նաև լսել պատուելիներու յեղափոխական ցնցող, յուզող, կազդուրող քարոզները: «Մի՛ սպաններ»ը առոնք բոլորովին տարբեր կերպով կ'ըմբռնեն և կը զգան, թէ այն Աստուածը, որ իր ամբողջ հաճոյքը ազդեր ջնջելու, անոնց արիւնոգը գինոգնալու մէջ կը գտնէ՝ իրաւունք չունէր արգիլելու՝ ստրկութեան լուծին տակ դարերով կիսամեծ տափակցած ազգի մը՝ ելլել իր ազատութեան համար կուսիլ եւ սպաննել: «Պէտք է սպաննել, սպաննութիւնը արգիլելու համար», ահա՛ սկզբունքը, զոր մեր յեղափոխական պատուելիները կը գաւառին:

Իսկ երիտասարդները ու անոնք մանաւանդ, որոնք երէկ, թրքական զնդաններու մէջ ժանգոտ շղթաներու երգն ու շառաչը լսեր էին ու կը յիշէին, իրենց յեղափոխական կրակոտ երգերով ժողովին խանդավառութիւնը կը կրկնապատկէին, իր ծայրագոյն աստիճանին կը հասցնէին:

Վերջապէս ամենքն ալ՝ առանց բացառութեան՝ յեղափոխութեան անհրաժեշտութիւնը կը շեշտէին ու սրբատանց փափաք կը յայտնէին որ «անտարբեր», «չէզոք», «չուարած» որակուիները այլ ևս անգործածելի գառնային ու իսպառ ջնջուէին յեղափոխական բառարանէն, որ այլ եւս՝ կ'անակ դարձուցած վատերուն, գասալիքներուն ու ապրող սատկածներուն՝ հայրենիքի բոլոր հարազատ ու անձնուէր զաւակները իրարու քով գային, յաւիտեական եղբայրութեան համբոյր տային իրարու ու ձեռք ձեռքի՝ միահամուռ՝ յեղափոխական դրօշին տակ՝ Ազատութեան ճամբէն քալէին:

Ժողովը երեք ժամու շափ տնեց, ու ոգեւորութիւնը վայրկեան մը շղարկեցաւ, շնչով շնչուեցաւ ընդհակառակը, երթալով սաստկացաւ, զրգուեցաւ, ու հմայուած հանդիտականները կ'ուզէին աւելի լսել յեղափոխական կազմուրիչ խօսքը, աւելի՛, մինչե՛ւ առաւ, յաւիտեան լսել...:

Ժողովը վերջացաւ Հնչակեան պաշտօնական երգով ու անվերջ ծափահարութիւններով:

### ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՉԸ

#### ԵՒ ՖՐԱՆՍԵԱՆ ՄՈՄՈՒԼԸ



Նոր կեանքի նախընթաց թուով հրատարակած էինք մեր կողմ ուղղուած ֆրանսական բոլոր երեսփոխաններուն: Սյդ առթիւ ֆրանսական մամուլին մէջ երևցած համակրական տաղերէն աւելորդ չենք սեպեք մաս մը թարգմանաբար հաղորդել մեր ընթերցողներուն:



Լա Բրքիս ֆիեքիսպիք բարիզեան ընկերվարական օրաթերթին 15 դեկտեմբերի թիւին մէջ «Հայաստանի Համար» և «Կոչ Մը» տիտղոսներուն տակ երևցաւ հետեւեալ յօդուածը:

«Անգամ մըն ալ, — վերջին անգամ մը գուցէ — Հայաստան իր աչքերը կը դարձնէ զէպի մեր երկիրը եւ կ'աղերսէ զայն օգնութեան հասնիլ իրեն: Անգամ մըն ալ մարտիրոս ժողովուրդը, հոգեվարք ժողովուրդը, կը խնդրէ մեզի ձեռք երկնցնել իրենց, քաշել, ազատել զինքը իր անձկութենէն, փրկել զինքը մահուրէն: Հնչակեան Յեղափոխական Քոմիթէին բերնովը, անխկա՛ծ ծանուցուած հարցապնդման նախընթացին՝ նոր ու կսկիծատ կոչ մը ուղղած է մեր խորհրդարանի անդամներուն:

«Ֆրանքո-թիւրք վեճը այդ պարագաներուն մեջ յոյս մը արթնցուցած էր: Անոնք կարծեցին թէ՛ քանի որ մենք խզած էինք Իրան հետ մեր դիւանագիտական յարաբերութիւնները, անտարակոյս չպիտի վերահաստատէինք զանոնք, բայց միայն արտասանած ըլլալէ յետոյ հարկաւոր, այլ՝ ամբողջ ժողովուրդի մը վարպետ ու մեթոտիք բնաջնջումին վերջ մը տալու բաւարար խօսքերը: Կը խարուէին: Անմիջապէս որ անոնք իրենց գիրները կարգադրուեցան, անմիջապէս որ Երևուող-Քէօշի մարդը քանի մը միաբանական հաստատութիւններ ընդունած և քաղզէացի պատրիարքի մը իրաւասութեան արտօնագրեր շնորհած եղաւ՝ ֆրանսական Հանրապետութեան կառավարութիւնը ետ կանչեց իր նաւախումբը:

Ինչպէս, ասանկ յուսախար ըլլալէ վերջ, դեռ կրնան կոր օժանդակութիւն մը սպասել Ֆրանսայէն: Ինչպէս դեռ կրնան կոր գիմել անոր: Անոր համար որ խորհրդարանը՝ նոյեմբեր 4ին տեղի ունեցած վիճաբանութեանց միջոցին՝ շատ յոտակօրէն ցոյց տուաւ հայկական խնդրին մասին իր բուն հոգածութիւնը: Հասկա Հայաստանը... հարցուցեր էին ամէն կողմէ, երբ

Պ. Տէլքասէ, որ խիստ երկարօրէն խօսած էր թիւպինի և Լոսանտօ խնդրոց վրայ, բեմը թողուց, առանց բառ մը ըսած ըլլալու այն միակ խնդրին վերաբերութեամբ, որ ամենքը իրապէս մտահոգ ըրած ըլլար:

Անկից ի վեր, Հայաստանի ի նպաստ ինչ ըրաւ մեր արտաքին գործոց նախարարը: Պերլինի դաշնագրութեան պայմաններուն և 1895ի մէտրանաժին գործադրութեան համար՝ պետութեանց միջազգային գործակցութիւն մը յառաջ բերել փորձեց: Պէտք եղածը ըրաւ, որպէս զի ստորագրակից պետութիւնները բռնեն՝ հայ ժողովուրդին և աշխարհիս առջեւ իրենց հանդիսաւորապէս առած յանձնառութիւնները: Այս զանազան կէտերուն մասին մեր վերջնական կարծիքը պիտի գոյացնենք «օրթուայէն» Ռուսնէի հարցապնդումին ժամանակ, որ պիտի գայ արտաքին գործոց պիւտճէին վիճարանութեանց օկիդը, այօինքն՝ քիչ օրէն:

Հայ ժողովուրդը կը սպասէ անհամբերութեամբ եւ անձկութեամբ. եւ պէտք է լաւ գիտնալ թէ՛ ո՛չ միայն իրեն, այլ ամբողջ Եւրոպայի համար՝ սրբան ծանրակշիռ է մէջտեղ դրուած հարցը: Հնչակեան Յեղափոխական Կուսակցութեան կողմ կը վերջնայ օտ բաներով:

Երկ այս անգամ ալ Եւրոպան խոստմնադրած պիտի գտնուի իր յանձնառութեանց, ինքն իսկ հայերը մղած պիտի ըլլայ յոռահատութեան արիւնտ խրատներուն հետեւեղառ, քանի որ անկարելի է մեզի անսահմանօրէն հանդուրձել որ մարդկային կերպարանքով հրեշներ շարունակեն անպատիժ մեր եղբայրներուն արիւնի մէջ քարխտելու եւ մեր օձախներուն պատիւը պղծելու:

Երկ Եւրոպան իրացնէ մտադրած է այս հակամարդկային վիրխարի ոճիրին մէջ միևնույն վերջը մեղաւակից մնալ Սոչրանին, քո՛ղ յայտարարե շակի շիտակ: Հայ ժողովուրդը՝ Եւրոպայէն և սոչրանէն միանգամայն մահուան դատապարտուած՝ պիտի գիտնայ անհրաժեշտ մեռնել: Իր հոգեվարքին գերագոյն ցոսնցը պիտի կրնար թիւրքիոյ վերջնական փոշոտմը պատճառել ոտ տակնուվրայումը՝ անարդարութեան վրայ հիմնուած եւրոպական սաւորայի խաղաղութեան:

Բայց երեսփոխանները ստացած են այս կողմ: Կը սիրենք յուսալ որ զայն կարդացած պիտի ըլլան անոնք, ու լա՛ւ կարդացած:

\* \* \*

Յրանոցի մեծանուն հրապարակագիր՝ Պ. Ժորժ Բլէմանսօ, իր Պոք շաբաթաթերթին մէջ, մեր կողմն ամբողջ վերջին մասը արտապելէ յետոյ, կ'աւելցնէ.

«Եւրոպան չ'անգիտեր որ այս խօսքերը ունայն սպառնալիքներ չ'են: Իր անտարբերութեամբն ու իր խոստումնա-

մոռացութեամբը, պիտի ստանձնէ՞ արդեօք անոնց իրականացումին պատասխանատուութիւնը:»

\* \* \*

Օտօսի մէջ, Իւոպէն Կօիէ մեր շրջաբերականէն խօշոր մաս մը արատապելէ վերջ, կը փութայ գարմանք յայտնել նորէն եւրոպական քաղաքագիտութեան դիմելու մեր անվըհատ յամառութեան մասին: — Ռ'բքան կը հասկնանք իր տեսնելու բացարձակ եղանակը, որ չի դադիր օակայն անբաւական հասկացողութիւն մը ենթադրելէ Հայկական Դատին ու չի կրնար հաշտուիլ, աւա՛ղ, անոր բարդ օւ յարաբերական նկարագրին հետ:

\* \* \*

Պիճիքական Լը րեօրը և Լ'երօսայ Պիճ կարևոր լըրագիրներն ալ գրադեցան մեր շրջաբերականով: Լ'երօսայ Պիճ իր 13 Դեկտեմբերի խմբագրականին մէջ, ծանրանալով մեր շրջաբերականին շուրջը, սպաւ կը վերջացնէ իր խորհրդածութիւնները.

«Անյայտնի է թէ առերևոյթ խաղաղութիւնը, զոր ներկային կը «վայելէ» Հայաստան, շատ կը նմանի գերեզմանի խաղաղութեանը, և ոչ նուազ սառոյգ է թէ Սուլթանը այն առեն միայն պիտի օրոշէ անձերու և ինչքերու ապահովութիւնը ապահովող բարեկարգութիւններ մտցնել, երբ ատոր բնադատուած ըլլայ պետութեանց կողմէ: Բայց կը վախնանք որ Հայ ըօմիթէն ինքզինքը պատրէ, եթէ Ռուսիոյ կողմէն լուրջ միջամտութեան մը վրայ յոյս դնէ:»

\* \* \*

Բրօ Արմէնեա, իր վերջին թիւին մէջ, ամբողջապէս հրատարակած է Հնչակեան կողմ, աւելցնելով Բլէմանսօի վերոյիշեալ խօսքերը:

ՀԱՍՅԷ

«ՆՈՐ ԿԵՍՆԻՔ»ի վերաբերեալ նամակ ու բաժնեգիրն ղրկել հետեւեալ հասցէին.

REDACTION DU "NOR-GUIANK"  
27, BATHURST GARDENS,  
KENSAL RISE,  
(ENGLAND.) LONDON, N. W.

ՆՈՐ ԿԵՍՆԻՔ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին և 15 ին: Բաժնեգիրն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 և վեցամսեայ 1 առլար: